

ՀՍԻՅ ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

---

Պրոֆ. ԱՇԽԱՐԷԲԵԳ ԳԱԼԱՆԹԱՐ

ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ  
ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Проф. АШХАРБЕК КАЛАНТАР

РАСКОПКИ  
ДРЕВНЕГО ВАГАРШАПАТА

*Handwritten mark*


902.6  
P-14

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՄԵԼԳՈՆԹԱՆ ՁՈՆԴԻ  
ՅԵՐԵՎԱՆ, 1935 թ.

5 OCT 2011

ВЕРНИТЕТО ВАТАРИАТА  
РАСКОПИЕ  
ИЗДАНИЕ






Ն. Մ Ա. Ռ. Ի  
անմոռաց հիշատակին

Незабвенной памяти  
Н. Я. МАРРА

Պետրասի տպարան  
Գլավլիտ 525  
Պատվեր 1522  
Տիրաժ 1000




9/9011-56

Անհիշելի պեղումների ընդհատումից հետո, սխտեմատիկ պեղումների գործը նորից վերսկսելու խնդիրը ԽՍՀՄ-ի Հայաստանում, Նիկոլայ Յակովլևիչը համարում էր այնքան ակտուալ, վոր սիրով հանձն առավ անձամբ ղեկավարելու Հին Վաղարշապատի պեղումները: Ճիշտ է, մեկն չունեցանք այդ բաղադր. իր այլ աշխատանքները Նիկոլայ Յակովլևիչին հնարավորություն չտվին գալու Հայաստան, սակայն՝ պեղումներից անմիջապես հետո նա մեծ հետաքրքրությամբ ծանոթացավ կատարված աշխատանքի հետ յեվ մնաց շատ գուհ քե՛ կատարումից յեվ քե՛ նրա արդյունքից: Չկա այժմ Ինքը, յեվ իրանով ներշնչված աշխատանքի այս համառոտ ֆկարագրիքը նրա անմոռաց հիշատակին է նվիրում:

Հեղինակը—յերախտապարտ աշակերտը:

### ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ



1931 թվի հոկտեմբերի 12-ից մինչև նոյեմբերի 10-ը, շուրջ մի ամիս տևողությամբ, կատարվեցին Հին Վաղարշապատի պեղումները, իբրև նախաբան նույն վայրում կատարվելիք սիստեմատիկ պեղումների. աշխատանքները տվին ըստ ամենայնի ուշագրավ և գիտական խոշոր կարևորություն ունեցող մի արդյունք, վորի համառոտ նկարագիրը յես ուզում եմ տալ այստեղ:

Նյութական կուլտուրայի իր բազմապիսի գանձերով Հայաստանը հանդիսանում է կարևորագույն մի աղբյուր

Թե տեսական հետազոտութիւնները և թե դարավոր փորձի պրակտիկ գործադրման տեսակետից՝ ըստ այն պահանջները, վոր այսոր առաջադրում ե մեզ ծավալուն սոցիալիստական շինարարութիւնը:

1924 թվից սկսած Հայաստանի նյութական կուլտուրայի ուսումնասիրական աշխատանքները, ձեռնարկված Հայաստանի Հնութիւնների Պահպանութեան Կոմիտեյի կողմից, կրել են գլխավորապես հաշվառման-բեզիստրացիոն բնույթ՝ պարզելու և բնորոշելու համար յերկրում յեղած ամբողջ նյութը և վորոշելու ու պլանավորելու նրանց հետազոտական աշխատանքների տեսակն ու հետևողականութիւնը:

Կատարված մի շարք պեղումները կախված ու կապված են յեղել բացառապես շինարարական աշխատանքների հետ և, թեկուզ տվել են անսպասելի հաջող արդյունք, սակայն հնագիտական տեղի ու նյութի ընտրութեան տեսակետից՝ կրել են պատահական բնույթ: Խորացած ուսումնասիրութիւնների համար անհրաժեշտ սխտեմատիկ պեղումներ հնագիտական կենտրոնական նշանակութիւն ունեցող վայրերում (Արմավիր, Գառնի, Արտաշատ, Վաղարշապատ, Դվին, Ամբերդ և այլն) միայն մատնանշվել են և հնգամյա պլանի մեջ մտել այն չափով, վոր նրանցից գոնե մի կետում սկիզբը դրվի սխտեմատիկ պեղումների, այնուհետև տարեց տարի աշխատանքները շարունակելու և այլ վայրերում ևս ծավալելու նպատակով:

Սխտեմատիկ պեղումները առաջին վայրը հանդիսացավ Հին Վաղարշապատը:

Գիտական տեսակետից Հին Վաղարշապատը առաջադրում ե մի շարք ընդհանուր գիտական արժեք ունեցող պորտրետներ, վերաբերող պատմական մի եպոխայի, յերբ արեւելքի ու արևմուտքի ուժեղ բողոքումները՝ հատկապես անտիկ աշխարհի, ի դեմս հռոմեացոց, Արևելքի գործերին խառնվելը, իրենց վորոշ ազդեցութիւնն են ունենում այստեղ արտադրական հարաբերութիւնների և հասարակութեան անտեսական ստրուկտուրայի ձևափոխման ընթացքի վրա. իր նոր ձևավորումն ե ստանում ֆեոդալական ֆորմացիան Հա-

յաստանում: Հին Վաղարշապատի պեղումները խոստանում են տալ տվյալ եպոխայի կյանքի պատկերն ավելի ռեալ ու լրիվ, քան այդ կարելի եր սպասել Հայաստանի մի այլ վայրից:

Հին Վաղարշապատի պեղումները հարցը վերջնականապես ձևավորվեց 1930 թ. ոգոստոսի 20-ին Հնութիւնների Պահպ. Կոմիտեյի նիստում լուստողկոմ ընկ. Արտո Յեղիազարյանի նախագահութեամբ և ակադեմիկոս Ն. Մառի մասնակցութեամբ: Ակադ. Ն. Մառը Կոմիտեյի կողմից հրավիրված եր լինելու պեղումները գիտական ղեկավարը: Կոմիտեյի պլանով սխտեմատիկ պեղումների համար նախատեսված վայրերից առաջին հերթին Հին Վաղարշապատի վրա կանգ առնելը հետևանք ե, անկախ նրա բազմակողմանի գիտական հետաքրքրութիւնից, նրա մի շարք տեխնիկական հարմարութիւնների ներկայութեան (մտտիկութիւն, հարմար հաղորդակցութիւն, աշխատողները համար շենքի—հարդարված բաղայի, ինչպես նաև գտնված հնագիտական արժեքները պահպանելու համար շենքի գոյութիւնը), վորոնցից առ այժմ գուրկ են պեղումների համար մատնանշած մյուս վայրերը:

Պեղումները համար անհրաժեշտ նյութական միջոցները հատկացումը յեղավ Լուստողկոմատի կողմից 1931 թ. ամբարն վերջում, վորից հետո Կոմիտեն, համաձայն ԼԺԿ. Կոլեգիայի 31 թ. սեպտ. 7-ի նիստի վորոշման (ղեկ. լուստողկոմ ընկ. Դր. Սիմոնյանի)՝ անմիջապես ձեռնամուկ յեղավ նախապատրաստական աշխատանքներին, ղեկավարվելով Կոմիտեյի և ակադ. Ն. Մառի միջև 1930 թ. ոգոստ. 20-ին կայացած համաձայնութեամբ: Միաժամանակ Լուստողկոմատի կողմից կազմվեց հատուկ հանձնաժողով «Հին Վաղարշապատի Պեղումների Հանձնաժողով» անունով, հետևյալ կազմով՝ ակադ. Ն. Մառ, ակադ. Ա. Թամանյան, պրոֆ. Ի. Մեչչանինով, պրոֆ. Աշխ. Բալանթար, Թ. Թորամանյան, Գեորգ Ասատուր, Սեն. Տեր.-Հակոբյան և Սմբ. Տեր.-Ավետիսյան. Էքսպեդիցիայի կազմի մեջ մտան նաև գիտ. աշխատավորներ՝ Յե. Բայրուրդյան, Կ. Ղաֆաղարյան, Ս. Յերեմյան, Աս. Դորդանյան, Ար. Հովհաննիսյան և Ս. Բարխուդարյան: Պե-

դուճները պլանը, վոր կազմեց Կոմիտեյի գիտնական քարտուղարը, քննվեց և ընդունվեց Հանձնաժողովի կողմից և, համաձայն Լուսժողովմատի կողմից հայտարարված, համաձայնեցվեց ՀՍԽՀ Գիտութունների Ինստիտուտի հետ:

Հոկտեմբերի 10-ին միայն պարզվեց, վոր ակադ. Մ ա ու Ն ը ն թ ա ց ի կ ա շ ն անը հնարավորութուն չունի անձամբ լինելու մեզ մոտ և ղեկավարելու պեղումները. բայց քանի վոր նախապատրաստական աշխատանքներն արդեն վաղուց ավարտված էին և, մասնավորապես, հնագիտական շրջանի հողերի մեծ մասը, համաձայն Ժողովուրդի վորոշման, Անդրկովկասյան Բանջար Տրեստին շտապ կերպով հանձնելու հարցը կար, վոր անհետաձգելի էր, բայց կատարել կարելի չէր միայն տեղի տրոհման հնագիտական ստուգումից հետո, ուստի ղումներին, տարով նրանց հետախուզական բնույթ, այս առաջին տարվա համար անելով վորոշակի առաջադրանք, այն է՝ պարզել հնագիտական բովանդակությունն այն ընդարձակ հողամասի, վոր դեռ տրոհված 1922-23 թվ. առանձնացված է իբեկ Հնագիտական Երջան («Զվարթնոցի Հնագիտական Երջան») և յեմքարվում է լինել Հ ի ն Վ ա դ ա ր Շ ա պ ա ս ի ֆ ա ղ ա ֆ ա ս ե ղ ի ն:

Հնագիտական Երջանը Զվարթնոցի ավերակների շրջապատն է, տեղավորված Յերևան-Վաղարշապատ խճուղու տակ (սկսելով «Հնձանափոսից»), 3 և 4 խորհանտեսութունների ու Հոփսիմեյի միջև՝ Վաղարշապատից մինչև Չոբանքար և Վարմազյար գյուղերը (տես տեղի քարտեզը, տխտ. I, Հնագիտ. շրջանի պլանը, տխտ. II): Մա անհարթ ձևի ձևով բլրաշատ մի տարածութուն է, ուր բլրանման անհարթութունները շարված են գլխավորապես այդ տեղի տրոհման յեղերամասերում: Այս արտաքին տեսքի տպավորության տակ, կազմվել է կարծիք, վոր այդ բլուրներն իրենց խրմբված շարքերով պատահական-ընկեր չեն, այլ նրանք քաղաքի «աշտարակների մնացորդներն» են, «պարսպաբլուրներ», վոր իրենց դասավորությամբ ցույց են տալիս պարսպների ուղղութունը: Այս կարծիքը հիմք է հանդիսա-

ցել նաև մի հեղինակավոր հանձնաժողովի համար (նշանակված ԼԺԿոմատի կողմից) Հնագիտական շրջանի սահմանները վորոշելու ժամանակ 1923 թվին՝ ընդունելով, վոր այդ «աշտարակներն» ու «պարսպներն» իրենց ընդգրկած տարածությամբ կազմում են Հին Վաղարշապատի—Կայնոպոլիսի քաղաքատեղին (տես Զեկուցում Հանձնաժողովի, գործ № 100):

Սրան ույժ են տվել, թերևս, նախկին ուսումնասիրողների կողմից առաջներում (1904 թվ.) տեղի վրա քանիցս կատարած ստուգումներն ու հավաստիացումը, վոր «բլուրների վրա հիմի էլ դեռ կան աշտարակների շրջանաձև խիստ հաստ պատերի հետքերը», և իբր թե «այլ ևս կասկած չի կարող, վոր մեր առաջ ընկած են մի մեծ հին քաղաքի ընդարձակ ավերակներ»\*):

Վերոհիշյալ կարծիքի ամրացման գործում քիչ դեր չի խաղացել, անշուշտ, գուցե և հիմք է հանդիսացել Պաշիկ վարդապետի այն հանրածանոթ հերյուրանքն ու պաճուճավորված պատմութունը, վորով նա Զվարթնոցի տեղում տեսնում էր «կրակապաշտների տաճար», «յերբայական տաճար» և վերջապես քրիստոնեական տաճար, այն էլ հենց «Եջմիածինը», իսկ շրջապատն էլ «Հին Վաղարշապատ քաղաքը»\*\*):

Յես այս հնացած «պատմության» վրա կանգ չէյի առնել, յեթե մինչև այստեղ էլ դեռ նա տալիս չլիներ իր արձագանքը, ինչպես տեսնում ենք Ի. Ա. Ուրանեցկու հոդվածում «К истории мита Давида в культуре Востока»\*\*\*). ուր հեղինակը Պաշիկի այդ տվյալների հիման վրա «հայ-յերբայական կուլտուրայի» տեսութունն է դարձացնում:

Անկախ այս կարծիքներից ու «տեսութուններից», Զվարթնոցի (Հին Վաղարշապատի) Հնագիտական շրջանը ճանաչելու համար, մինչև վերջին պեղումները, մեզ հայտնի էյին

\*) Մերոպ վարդապետ (այժմ արքեպիսկոպոս)—Եջմիածին և հարյուց հնագույն յեկեղեղիներ, 1905 թ., էջ 13:

\*\*) Տես նաև Մեսրոպի հիշ. աշխ. էջ 12-16.

\*\*\*) Известия Общества Исследования и Изучения Азербайджана. № 8, вып. VI, 1929 г. կա նաև առանձին արտատպութուն:

գիտականորեն ստուգված միայն հետեվյալ իրական տվյալները.—

1. Զվարթնոց, իբրև պատմական վոյուդ (VII դ.) ժամանակաշրջանի գործ.

2. Հուհարեն մի արձանագրություն, գտնված Եջմիածնի առուի շինության ժամանակ 1914-15 թվ.

3. Նույն առուի վրա դամբարանների բացում, բնորոշվող կավե թրձած դագաղներով (պեղումներ Թորամանյանի, Աշխարհբեգի և Սեն. Տեր-Հակոբյանի 1926—1929 թ. թ.).

4. Միևնույն շրջանում, բայց Հռիփսիմեյին ավելի մոտ, Այգեգործական Ընկերության գիտնական շինության ժամանակ՝ «սրվակավոր» դամբարանների բացում (պեղումներ Աշխարհբեգի 1930 թվ.):

Այս հուշարձանները սակայն, վորքան ել կարևոր իրենց գիտական արժեքով բայց և շատ քիչ էյին՝ վերջնական կարծիք հայտնելու համար ամբողջ տերրիտորիայի մասին, վորի միայն յերկու տարբեր կետեր նրանք բնորոշում են, ուր իրենք խմբված են:

Ձեռնարկվող պեղումները միայն կարող էյին, հիմնված իրական նոր տվյալների վրա, ասել վորոշակի խոսք ամբողջ շրջանի ինչ լինելու մասին՝ հաստատելով կամ հերքելով a priori արված կարծիքներն ու յեղրակացությունները:

Ձեռնամուխ լինելով հետախուզման և պեղման աշխատանքներին, համաձայն մշակված պլանի, ամբողջ տերրիտորիայի մեջ մատնանշվեցին չորս առանձին կենտրոններ, վորոնք ըստ իրենց արտաքին տվյալների կարող էյին նպաստել առաջադրած խնդրի ավելի արագ ու անվրեպ լուծմանը: Այդ կետերում աշխատանքները կատարվեցին միաժամանակ չորս տարբեր խմբերի կողմից, ղեկավարությամբ «Հին Վաղարշապատի պեղումների Հանձնաժողովի» կազմից այն ընդերների, վորոնք անձամբ կարողացան մասնակցել գործին:

Այդ կենտրոններն են՝

1. Զվարթնոց, ղեկավարությամբ ընկ. Թ. Թորամանյանի.

2. «Անասնաթաղ» բլուրը—Հնագիտական շրջանի հյուսիս-արևմտյան ծայրամասում, ղեկավարությամբ ընկ. Սեն. Տեր-Հակոբյանի.

3. Զվարթնոցից հարավ-արևելք գտնվող բլրաշարքը—ղեկավ. ընկ. Սմբատ Տեր-Ավետիսյանի.

4. Ընդհանուր հետախուզում ամբողջ տերրիտորիայի, ղեկավ. ընկ. Աշխարհբեգ Քալանթարի:

Չափի ու պլանի տակ ղենելու համար սխտեմատիկ պեղումների գործը, իբրև անհետաձգելի անհրաժեշտություն, կատարվեց աշխատանքների ընթացքում նաև ամբողջ տերրիտորիայի գեոգեգրիական հանույթը [с'емка-ն] (բացի այն մասերից, վորոնք վորևե հնագիտական արժեք չեն ներկայացնում)՝ յերկրաչափ Գր. Գրիգորյանի կողմից: Ամբողջ տարածությունը վեր ածվեց քառակուսիների 100×100 մետր չափի, վորոնք քարի նշաններով իրարից բաժանված են և համարագրված (տխտ. III, Հ. Վաղարշապատի — Զվարթնոցի շրջ. Գեոգեգ. հանույթը):


1.

ՊԵՂՈՒՄՆԵՐ ԶՎԱՐԹՆՈՑԻ ՇՈՒՐՁԸ.


Պեղումները տեղի ունեցան ավերակների հարավակողմում բազիլիկայի մնացորդների և աշխարհիկ շենքերի անմիջական շարունակությունը կազմող բլրացած մասում: Տևեցին միայն վեց ուր և ընդհատվեցին ղեկավարի հիվանդության պատճառով: Չնայած դրան, ընկ. Թորամանյանն ի նկատի ունենալով պեղված շերտերից մեկը, վոր մոխիր և ածուխ է պարունակում, արավ այն կարևոր դիտողությունը, թե, գուցե, այդ հրդեհը տեղի ունեցած լինի ներսեսի շինարարությունից առաջ:

Այս նորությունը չի հակասում, այլ ընդհակառակը հաստատում է այն փաստը, վոր Զվարթնոցի շինությունից (VII դ.) առաջ ել նույն տեղում յեղել են շենքեր (որինակի համար՝ Զվարթնոցի կոմպլեքսի մեջ—մկրթ տարանի և բազիլիկի մնացորդները, վերջինիս պատերի և սյուների խարխախների վրա պարզ յերևում են հրդեհի հետքերը). (նկ. № 1 - 2):

Այս աշխատանքների ժամանակ ղեկ. ընկ. Թորամանյանն ոգնել է ընկ. Ասիա Դորդանյան:



Նկ. 1. Պեղման վայրը Զվարթնոցի հարավայնագծում.



Նկ. 2. Զվարթնոցի հարավ. մասում աշխարհիկ շենյախի ավերակներ, փորնց կնց պեղման վայրը.




ՊԵՂՈՒՄՆԵՐ «ԱՆԱՍՆԱԹԱՂ» ԲԼՈՒՐԻ ՎՐԱ ՅԵՎ ՆՐԱ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ.

Այս բլուրը գտնվում է Հնագիտական շրջանի հյուսիսարևմտյան ծայրամասում, Հոփսիմեյի ուղղութամբ, ներկայիս վաղարշապատի արևելյան սահմանագծի վրա:


Այս կետի աշխատանքներն ընդհանուր ուղղությունը առարկա դարձան. և սկզբի յերեք-չորս որը առաջին յերեք խմբերն ի միասին իրենց աշխատանքները կենտրոնացրին այստեղ: Դրա պատճառն այն տեղեկությունն էր, Վոր իբրև հիշողություն պահել էր. Թորամանյանը (տես նաև Մեսրոպյանի — ՆՊՄ. և հայոց հն. յեկ. հՂ 14) այդ բլուրի վրա 30 տարի առաջ պատահաբար (ժանտախտից ընկած բազմաթիվ անասուններ թաղելու միջոցին) խոր վորված քամ յերևեցած և նորից ծածկված մի պատի մնացորդի մասին, սրբառաջ քարերով և շրջանաձև, վորին ականատես է յեղելինքը ը. Թորամանյանը և վորը հենց այն ժամանակ ընդունվել իբրև քաղաքի պարսպի աշտարակի մնացորդ. և քանի վոր նա արտաքին չերեսով դարձած է յեղել դեպի Հոփսիմեյի կողմը, ուստի անժխտելի համոզմունք է առաջացել, վոր քաղաքատեղին համարվելու յի վոչ թե Հոփսիմեյի և ներկայիս վաղարշապատի ուղղութամբ, այլ նրան հակառակ Չվարթնոցի կողմը, այսինքն ամբողջապես «Հնագիտական շրջանի» տեղում:

Ձանազան ուղղութամբ վորված տրանշենները բլուրի վրա բաց արին յերկու նվազ թաղված անասունների կմախքները, սակայն չհայտնաբերեցին վոչ մի պատի մնացորդ, բացի մի ընական ժայռամասից, առանց մշակման վորևե հետքի. ընդհակառակը, տրանշենների տեղում, 1—1½ մետր խորության վրա, բացվեցին մի քանի գերեզմաններ, իրենց տիպով և բովանդակությամբ հոմեակական եպոխայի, վորոնց գոյությունը բլուրի վրա, դարձնում է անհավանական նույն տեղում պարսպի-աշտարակի գոյություն հնարավորությունը. (նկ. № 3):



Կ. 3. «Անասնաթաղ» բլուրի պեղումները.

25-106



Պարզ եր, վոր առաջներում նկատված պատի մնացորդի գտնված տեղը այդ բլուրը չի. թեկուզ և նրա շրջակայքում, թե ցածրահարթ և թե հարևան բլուրները վրա շարունակվող հետախուզումները չհայտնաբերեցին վորևե նման մնացորդ, այլ միմիայն դամբարաններ, վորոնք բոլորն ևլ կարող են առաջինների հետ վերագրվել միևնույն ժամանակաշրջանին:

Այսպիսի արդյունքից կարելի չե այն յեզրակացութեան վար, վոր ընկ. Թորամանյանի տեսած «աշտարակի մասը» (սա թեկուզ և չգտնվեց այժմ, բայց անշուշտ կա մի վորևե տեղում, կամ գուցե բացողները քանդել տարել են բոլոր քարերը, տեղում չլիցնելով վոչ մի հետք), հավանաբար, յեղել և վոչ թե քաղաքի աշտարակի մաս, այլ դամբարանային վորևե կառուցվածքի մնացորդ, վորը կարող եր աւնենալ և կոլոր ձև:

Այստեղ բացված վերջին դամբարանների պեղումները կատարվեցին գլխավորապես ը. Յե. Բայբուրդյանի ձեռքով, ը. Սուրեն Յերեմյանի հետ միասին:

3

**ԶՎԱՐԹՆՈՑԻՑ ՀԱՐԱՎ-ԱՐԵՎԷԼԻՔ ՏԱՐԱԾՎՈՂ ԲԼՐԱ-ՇԱՐԲԸ,** վոր յենթադրվում եր լինել քաղաքատեղու արևելյան պարսպամասը, հետախուզման յենթարկվեց ընկ. Սմբ. Տեր-Ավետիսյանի կողմից:

Աշխատանքները կարճատև յեղան դեկտեմբերի շտապ մեկնելու պատճառով, ուստի և նա անկարող յեղավ վերջնական յեղրակացութեան գալ բլուրների վերաբերմամբ, քանի վոր կատարված պեղումները վորևե շինութեան հետք չհայտնաբերեցին:

Այդ շրջանում աշխատակցում եր ը. Ս. Յերեմյան:

4.

**ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՇՐՁԱՆԻ ՏԵՐՐԻՏՈՐԻԱՑԻ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ՀԵՏԱԽՈՒՉՈՒՄԸ.**

Այդ աշխատանքները տվին հետևյալ արդյունքը. Պարզվեց, վոր նյութական կուլտուրայի մնացորդները հետա-

խուզման յենթակա շրջանի մեջ, կազմում են իրարից անկախ յե ք ե ք խմբավորումներ. մեկը սրանցից Զվարթնոցի անմիջական քաղաքում է; վորը միախառնվում է բուն Զվարթնոցի բունած տարածութեան հետ. մյուսը Զվարթնոցից հարավ, բայց նրանից անկախ մի յերկարավուն հողամաս է, վոր բռնում է «Հնագիտական շրջանի» հարավարևմտյան բլրաշարքը ամբողջովին. իսկ յերրորդը՝ «Անասնաբաղի» — Հոփսիսիմեյի քաղաքը:

Իրանցից բացի, մնացած ամբողջ տարածությունը, ի մեջ առած նաև արևելյան բլրաշարքերը (ճանաչված իբրև առանձին ռայոն հետախուզութեան համար) — գուրի է վորևի կուլտուրական մնացորդից և, ըստ յերևույթին, նա իբրև անապատային վայր, յերբեիցե մարդու բնակավայր յեղած չէ: Այս դիտողութեանը հիմնավորվում է նրանով, վոր բնակատեղիներին հատուկ վորևե հետք (ածխային, վոսկրային, քերամիկական, մետաղե, և այլ վորևե արհեստականութեան չնկատվեց գետնի յերեսին, ինչպես նաև նրա շերտերում, վորոնց շարքում ընդհանրապես չկա կուլտուրական շերտ: Սրանցից վերինը, նորը — ավազաշերտ է, վորի տակ մյուս բոլոր շերտերը բնական յերկրաբանական են և հետախուզման յենթակա շրջանում ամենուրեք — միատեսակ: Այս դրութեանը պարզ յերևում է վերջին տարիների ընթացքում այդ վայրում կատարված հողային աշխատանքների արդյունքից. այսպես՝ Յերևանի հիդրոկայանից դեպի Այր լիճ եներգիւհ-հոսանքի սյունատեղերից (4-5 մետր խորութեամբ) և սովխոզի նոր ջրանցքի փորվածքից, վորը բռնում է ամբողջ Հնագիտական շրջանը՝ սկսելով նրա հյուսիսային ծայրից և յեղերպսեղելով նրա բովանդակ բարձրահարթը արևելքից, հարավից և արևմուտքից, ըստ տեղի բնիկների՝ ամենուրեք հայտնաբերում է միօրինակ յերկրաբանական շերտեր: Անկախ դրանից, հիշյալ ջրանցքի շինութեան նախապատրաստական աշխատանքների առընչութեամբ՝ տերրիտորիայի զանազան մասերում փորված են խոր փոսեր, վորոնք ավելի շատ շերտերի հետ են մեզ ծանոթացնում: Շերտերի դիտում-հետախուզումը դարձնում է միանգամայն

աներկբայելի լեղած բուռնների բնական ծագումը, վորոնք կազմում են շղթայանման բարձրահարթեր ու ձգվում գլխավորապես հյուսիս-արևմուտքից—հարավ-արևելյան ուղղությամբ. շղթաներն իրենց միջև առաջացնում են և ցածրահարթեր: Այս ամբողջ անհարթ տարածությունը բնական շարունակություն է կազմում Արագածի լանջերի՝ կազմելով նրանց վերջին ծայրերը, վոր հասնում են Արարատյան դաշտաբերանին:

I

Տերրիտորիայի ամբողջական հետախուզման հետևանքով պարզված՝ նյութական կուլտուրայի տվյալներ պարունակող առաջին շրջանն, ինչպես ասացի, Ձվարթնոցի շրջապատն է: Այստեղ բուն Ձվարթնոցի կումպլեքսից դուրս,  $1/2$  կիլոմետր նրանից դեպի հարավ, յերևաց գետնահավասար պատի հետքերով, պարզվեց, վոր դա 1, 86 մետր հաստությամբ մի պարիսպ է, վորը պատում է շուրջանակի մի ընդարձակ տարածություն (նկ. № 4). այս տարածության կենտրոնը կազմում է Ձվարթնոցն իր, նախկին պեղումներով բացված, շինությունների—տաճարի և բնակելի շենքերի—ավերակներով. իսկ այն հողամասը, վոր գտնվում է բուն Ձվարթնոցի ավերակների և ներկայումս բացվող արտաքին շրջապատի միջև, ու մինչ այժմ մեծ մասամբ ոգտագործվել է իրրև այգետեղ կամ վարելահող ու չունի աչքի ընկնող արտաքին նշաններ— ներկա հետախուզման հետևանքով ի հայտ բերեց բավականաչափ շատ մնացորդներ հին շինվածքների, ցրված նրա բոլոր մասերում, ինչպես նաև առուի հետքեր, այգետեղեր և այլն:

Այս շրջապարիսպը միանգամայն պարզ սահմանաբաժան է ներսի յերբեմնի շեն հողամասի-բնակատեղիի, և դրսի բոլորովին ամայի տարածության մեջ: Շրջապարսպի այն մասը (ընդհանուրի՝  $1/3$ -ից ավելին), վոր գտնվում է Ձվարթնոցից հարավ և արևելա-հարավ՝ ամբողջովին տեսանելի է դարձրած հետախուզական աշխատանքներով— մաքրելով նրան ծածկող հողաշերտը (տես Տախտ. III), իսկ մնացած



Նկ. 4. Հնագիտական շրջանի ամբողջական հետախուզում. պարսպ բացում Ձվարթնոցի շրջապատում:

մասը (արևմտյան, հյուսիսային և հյուս. - արևելյան) վերահանգնած է միայն արտաքին աղոտ նշանների հիման վրա մոտավոր ճշտությամբ: Պարիսպը ընդհանուր առումով շՐՐ-ջանաձև է, մոտ մի կիլոմետր տրամագծով: Բացված մասում պարիսպն ունի մի մուտք չորս մետր բացվածքով, վոր գտնվում է Ջվարթնոցից արևելք, քիչ արևելահարավ: Մուտքի յերկու կողմում ընդհանուր պարսպից բաժանվում են յերկու հաստ պատեր, վորոնք իրար դուգահեռ, բայց շրջապարսպին ուղղահայաց, մոտ 100 մետր հեռավորությամբ իրարից, գնում են դեպի Ջվարթնոց. սրանց մեծ մասը նույնպես բացված է (տես Գեոդեզ. հան. Տախտ. III՝ Ջվարթնոցի շրջապատը):

Այս շրջապարսպի և Ջվարթնոցի միջև կապը միանգամայն ակնհեր է. ի նկատի ունենալով այն, վոր պարսպի շարվածքի միջուկի (շաղախի հետ խառնված) մանր քարերը, վորոնք կան թե իրանց տեղում — պարսպի պահպանված մասում — և թե նրա ուղղությամբ ցրված գետնի յերեսին՝ տուֆ քարի մշակումից ընկած բեկորներ են՝ միանգամայն նույնացող Ջվարթնոցի շենքերի քարի տեսակներին՝ պետք է յեզրակացնել, վոր այդ պարիսպն, իրրև ընդհանուր պատվար, կառուցված է հենց Ջվարթնոցի շինության հետ միաժամանակ, կամ նրանից անմիջապես հետո, յիրբ ողտագործվել են նաև նրա շինության քարի ընկած բեկորները.

Ինչպես ասացի վերևում, in situ — տեղում պահված մնացել է միայն շրջապարսպի ներքին մասը, ներկայումս գետնահավասար հիմքը, վոր յերկու յերեսից խոշոր քարերով ամուր կառուցվածք է: Թե ի՞նչպես եր շինված պատի վերին — չպահպանված մասը, դժվար է ասել, վորովհետև վորևե հետք չի մնացել. նա կարող եր լինել ցիխապատ, ըստ տեղական սովորության, կամ քարաշեն (և այս դեպքում վերին մասը գուցե ավելի բարակ լիներ քան նրա հիմքը, վորը այդ տեղում ցոկոլ եր կազմում), վոր ավելի հավանական է, քանի վոր քարաշեն շարվածքի միջուկը կազմող մանր կտոր քարերը մինչև այժմ ել ցրված են պատի ուղղությամբ, իսկ յերկու յերեսի արտաքին խոշոր քարերը վաղուց կարող են գործածության համար տարված

լինել վաղարշապատոցոց կամ այլ հարևանների կողմից, վորպիսի վիճակին յենթարկվել են նաև Ջվարթնոցի տաճարի և կից շենքերի բազմաթիվ քարեր:

II

Նյութական կուտուրայի տվյալներ պարունակող յերկբոսք ՅՅՂԱՆԸ, հնագիտական ամբողջ տերրիտորիայի սահմանների մեջ, ինչպես ասացի, այն յերկտրավուն հողամասն է, վոր բռնում է հևագիտական երջանի արեվմսա-հարավային բլրաշարք: (տես Գեոդ. հան., Տախտ. III) Այդ բլուրների մանրազննին դիտումը պարզեց նրանց բոլորովին այլ բնույթը, միանգամայն տարբեր հնագիտական շրջանում յեղած մյուս բազմաթիվ բնական բլուրներից: Այստեղ, հողամասի ամբողջ յերկարությամբ, իրարից վորոշ հեռավորության վրա գտնվում են հինգ բլուրներ, վորոնք արտաքուստ միանման են և, իրրև առանձնահատկություն, ունեն շուրջանակի կրոմլեխանման շարվածք մանր քարերից, և զբանով կասկած չեն թողնում, վոր արհեստական ծագում ունեն ու պարզապես կուրգաններ են, կուրգանային դամբարաններ:

Ըստ յերևույթին, ահա այս կուրգանների կրոմլեխանման — գոտիաձև շարվածքն է, վոր Մեսրոպի կողմից ընդունվել է իրրև «աշտարակների շրջանաձև պատերի հետքեր» (տես եջ 11):

Կուրգանների գոյությունը «չին վաղարշապատի քաղաքատեղիի» սահմանների մեջ, վորքան և անսպասելի, բայց խոշոր նորություն նկատելով անհրաժեշտ եր պարզել նրանց տիպը, ժամանակը, կուտուրան — կատարելով մեկի փորձնական պեղում:

Իրրև կուրգան ֆիկսացիայի յենթարկված բլուրները հետևյալներն են —

Ա. կուրգանը բլրաշարքի վերին (հ-Վ) ծայրի բլուրն է (տես Տախտ. III, Գեոդ. հանույթ, քառակուսի 267). սրագագաթը մոտ 5 մետր տրամագծով և 2<sup>1</sup>/<sub>2</sub> մետր խորությամբ փորված է առաջներում, գուցե հնագիտական պե-

դումի նպատակով, բայց կատարված անկանոն, ըստ վորում, վորևե հիշատակությունն այդ մասին, գրավոր կամ բանավոր, ինձ հայտնի չէ:

Բ. կուրգանը ա-ից մոտ 250 մետրի վրա դեպի հարավ-արևելք, նրանից ավելի ցածր, գոտիանման շրջագծի տրամագիծը 27, 60 մետր: Այս կուրգանը Չվարթնոցից հարավ, քիչ հարավ-արևմուտք է (հիշաը աղիմուտով  $\angle \frac{550}{30} \rightarrow \frac{250}{210}$ ), իսկ Հռիփսիմեյից ուղիղ հարավ-արևելք. (Գեոդ. հան. քառ. 283):

Գ. կուրգանը՝ ա. և Բ-ի գծի վրա մոտավորապես, Բ-ից ավելի քան հայրուր մետր հարավ. ա-ի չափ խոշոր է նրա ձևով գաղաթը պեղված. սրա լանջի վրա ևս նկատվում է գոտիանման քարաշարի մնացորդ (Գ. հ. քառ. 293) (նկ. № 5):

Դ. կուրգանը առաջինների գծի վրա դեպի հարավ-արևելք, վերջինից մոտ 400 մետրի վրա. նման է նրանց, նույնպես ունի շրջագոտի (Գ. հ. քառ. 314-315):

Ե. կուրգանների շարքի վերջինը, ամենահարավային կուրգանը գտնվում է դ-ից  $1 \frac{1}{2}$  կիլոմետրի վրա, հնազրտական շրջանի ներքին ծայրին մոտ, յերկու ճանապարհների միախառնման անկյունում: Այս կուրգանն արտաքուստ բոլորովին կոլոր է, բարձր չէ. գոտիանման քարաշարն այստեղ ունի 36.60 մետր տրամագիծ. բացի մեծ շրջագծից՝ ունի նաև կոնցենտրիք ձևով ավելի փոքր շրջան հենց գաղաթի վրա, վորի տրամագիծը 2.55 մետր է, իսկ շրջագծի շարվածքն էլ հետը—5.03 մետր: Սրա տեղագրությունը՝  $\angle 15 \rightarrow$  Չվարթնոց,  $\angle 330 \rightarrow$  Հռիփսիմե,  $\angle 345 \rightarrow$  Արագած (Գ. հ. քառ. 331):

Բացի այս խոշոր կուրգաններից կա ևս մի փոքր կուրգան (թիկուղ առանց արտաքին պարզ նշանների ու դեռ ևս չստուգված) դ. կուրգանի մոտ, նրանից մոտ 50 քաջլ դեպի արևելահյուսիս, սայլի ճանապարհի տակ, վոր անցնում է յերկուսի միջով: Գուցե լինեն այլ փոքր կուրգաններ ևս, ինչպես որ, ա. և Բ. կուրգանների արևմտյան կողմում յեղած յերեք հատ մանր բլուրները:

նկ. 5. Կուրգանների շարքը. նկարի վրա ա. Բ. Գ. կուրգանները.

Այս կուրգաններն, ինչպես հիշված է վերևում, գտնվում են մի գծի վրա—մի շարք են կազմում, վորի արևմտյան սահմանամերձ վայրը 3-րդ խորհանոտեսությունն է (նախկին վանքի «դորուղները»), իսկ արևելյան կողմից ծայրեծայր՝ անցնում է մի ճանապարհ (սայլի) դեպի Ռահաբադ գյուղը:

Փորձնական պեղումի համար մեր կողմից բեզիստըր-ցիլայի յենթարկված հինգ խոշոր և ակընհայտնի նշաններով կուրգաններից պետք էր ընտրել մեկը: Շարքի վերջին (ե-րդ) կուրգանը ինձ թվում էր ավելի խոստմնալից, ի նկատի ունենալով նրա ավելի ընդարձակությունը (36-37 մետր արամագծով), գուցե ավելի մեծ բովանդակությամբ (անհատական թի կոլեկտիվ). բացի այդ, նրա ավելի ցածրադիր լինելը, վոր կարող էր համեմատաբար ավելի հին լինելը ցույց տալ. սակայն, նկատի առնելով նրա հեռավորությունը մեր հիմնական բազաներից (Հոփսիմե, Զվարթնոց), վոր մի շարք դժվարություններ կարող էր առաջացնել աշխատանքի ընթացքում, և հետագայում ել պահպանության գործը դժվարացնել ու անգամ վտանգել՝ ուստի յես նախընտրեցի պեղման յեմքարից մեք նկատարածներից Բ կուրգանը, վորը գտնվում է առաջներում պեղված (?) յերկու կուրգանների միջև. դրանով միաժամանակ մենք վորոշ չափով վերականգնած կլինենք (հուշարձանը հասկանալու տեսակետից) և այդ հարևան կուրգանների ետևում, վորոնք թեկուզ և պեղված, բայց մնում են մեզ անհայտ ու կորած անհետ:

Նախ քան մատնանշած կուրգանի պեղումներին ձեռնարկելը՝ անհրաժեշտ համարեցի ծանոթանալ այս կուրգանախամբի ավելի լայն շրջապատի հետ, նպատակ ունենալով պարզելու նրանց տարածման շրջանը ներկա հնագիտական շրջանից գուցե և դուրս, ու, յեթե հնարավոր լինի, վորոշել նաև, թե վճրտեղ կարող էր լինել կուրգաններ շինողների բնակատեղը, վորի հետքեր չնկատվեցին հետախուզման յենթակա տերրիտորիայի վրա:

Շրջապատի դիտումը պարզեց, վոր մեր կուրգանախամբից դեպի արևմուտք, Հնագիտական շրջանից դուրս, 1<sup>1</sup>/<sub>2</sub>-ձ


կերձետը հեռավորության վրա, ներքեում փոխված ընդարձակ դաշտում, պարզ յերևում են գատ-գատ բլուրներ, վորոնց կուրգան լինելը հաստատվեց տեղի վրա կատարված ստուգումով: Մրանք նույնպես մի խումբ են հինգ կուրգանով, վորոնցից յերեքը խոշոր, իսկ յերկուսը փոքր՝ մեկը մյուսից մի քանի հարյուր քայլ հեռավորության վրա: Ուրիշ վորևե մնացորդ այդ վայրում կուրգանային ժամանակաշրջանի՝ յես առ այժմ չնկատեցի:

Յերկու կուրգանախամբի միջին գոնան այժմ 3-րդ խորհանոտեսությունն է բռնում. կուրգանադաշտը վաղարշապատցոց «նեբքին հանդն» է. այս կուրգաններին վաղարշապատցիք «կոնդեր» են ասում. սրանցից ամենաարևմտյանը (եջմիածնի ուղղությամբ) կոչվում է «Ղուզոփ կոնդ», վորի կենտրոնական մասը փոքրված է, բացված, ծակելով դա-կնտրոնական մասը փոքրված է, բայց կիսատ թողած, նաև գաթից). նույն վիճակումն է, բայց կիսատ թողած, նաև մի այլ կուրգան. մնացող յերեքն, ըստ արտաքին տեսքի, մնացած են անաղարտ: «Ղուզոփ կոնդ»-ի գագաթի պեղումը, վոր կատարված է առաջներում, ըստ յերևույթին, գիտական պահանջ չի ունեցել՝ զգուշ վերարկվելու դեպի հուշարձանը և պահպանելու հետադոտության համար նրա կառուցվածքը բնորոշող մասեր. բայց և այնպես իրար խառնված մնացորդներից կարելի յե լինում վորոշ չափով պատկերացնել նրա նախկին տեսքը. դա ըստ յերևույթին մի սենեկանման շենք է հողակույտի տակ, վոր արևելյան կողմից ունեցել է թաղավոր մուտք, մի տիպ, վորը մոտավորապես հիշեցնում է դանիական տումուլուսները:

Մեր կողմից պեղման յենթակա Բ. կուրգանը իր հարևան Ա. և Գ. կուրգաններից քիչ ավելի ցածր է. նա միանգամայն կտրոր է, վորի գոտիանման շարվածքն ուղիղ շրջան է կազմում. շրջանի ներսի մասը—կուրգանի գագաթը—ծածկված լինելով բարակ խիճով՝ բոլորովին մերկ է բուսականությունից. այս հատուկ է այստեղի բոլոր կուրգաններին (տես Տախտ. IV):

\*) Մեսրոպի հիշատակած «կուրգանը դաշտի մեջ», վորի պեղման անհաջող փորձն է արել լինքը 1893 թվին (ibid 14), հավանաբար այս խմբին է վերաբերում և կապ չունի մեր կուրգանների հետ:

Պեղումներն սկսեցինք կուրգանի արևելյան կողմից, նրա գետնահավասար ստորոտից, չորս մետր լայնության տրան-  
 շեյով հետզհետե խորանալով դեպի կենտրոն՝ ուր միայն  
 համապատասխան չափով լայնացրինք հատվածի բացվածքը,  
 վորպեսզի ընդգրկել կարողանանք կուրգանի կենտրոնական  
 մասն ամբողջովին — աշխատանքների ամբողջ ընթացքում  
 անշեղ կիրառելով կվադրատներով (4×4 մետր) ու շերտե-  
 րով պեղելու մեթոդը: 1-ին կվադրատում քարաշար գոտու  
 համապատասխան մասը մենք չքանդեցինք, այլ ամբողջ  
 լայնությամբ (3. 40 մետր) միայն մաքրեցինք արտաքին  
 հողից և վորոշ մասում աստիճանաբար խորացրինք, վոր-  
 պեսզի պարզ լինի շարվածքի հաստությունը, նաև նրա  
 նյութն ու շինելու յեղանակը (նկ. № 6): Նա չափազանց  
 ամուր և շինված, քարերն իրար կպցրած — կավաշաղախով



Նկ. 6. Բ. կուրգանի պեղումը. քարաշար գոտու բացումը

պնդացրած: Ընդհանրապես մինչև կուրգանի պեղման ավար-  
 տումը զանազան միջոցառումներով, ըստ հնարավորի,  
 պահպանվել են իրենց տեղում այն բոլոր ավյալները, վոր-

տոնք պարզում են մեզ հուշարձանի կառուցման ընթացքում  
 գործադրված պրիոմները, տեխնիկան, նյութի մշակման  
 ու գործածման յեղանակը և այլն: Աշխատանքի ամբողջ  
 պրոցեսը գուզորդիլի և մանրամասն չափագրումներով և  
 նկարահանումներով. (տես Տախտ. IV և V):

Առաջին քառակուսուց հետո, փորվեց յերկրորդը, և միայն  
 յերրորդ քառակուսում, մոտ 10 մետրի վրա (հաշվելով  
 քարաշար գոտուց) յերևաց կենտրոնական կառուցվածքի  
 արեվիկյան կողը մանր ջրաքարերով շարվածքի ձևով  
 (նկ. № 7): Ըստ այդ կառուցվածքի բռնած տարածու-  
 թյան՝ մոտավորապես բոլորամասն՝ հողի հատվածի բաց-  
 վածքը հետզհետե լայնացնելով, բացվեց կուրգանի գլխա-  
 վոր — դամբարանային մասը, վոր կազմում է նրա կենտ-  
 րոնը:



Նկ. 7. Բ. կուրգանի պեղման ընթացքը

կուրգանի շերտերը կազմված են հողի և ավազի տարրեր  
 տեսակներից և կավաշաղախից: Նրանց ուղղությունն ու  
 հերթականությունը, վորոնցով շատ հեշտությամբ կարելի յե-

լինում հետևել կուրգանի կառուցման պրոցեսին, պարզ ցույց են տալիս, վոր նրա կառուցումը կատարված է յերկու նվազ, այն է, նախ՝ դամբարանն ամրացրած ծածկող մասը համարյա կուրգանի ամբողջ բարձրությամբ, և ապա՝ հողաթումբն քնդհանրապես (Տախտ. V): Առաջինը, վոր վերաբերում է բուն



Նկ. 8. Բ. կուրգանի պեղումը. թեղանման շարվածք դամբարանի շուրջը.

դամբարանին և շինված է ավելի ամուր, ամենաներքևում ունի մի շերտ կավաշաղախից, վորով ձեկված է դամբարանի բերանը: Իներանի շուրջը, դամբարանի քառակուսու կտրված-

քից դուրս, նրան շուրջանակի, գտնվում է մանր ջրաքարերով թեղանման շարվածք (Նկ. № 8): Ներքին սվաղաշիրտից մինչև կուրգանի գագաթը, վոր ընդամենը 2 մետր հաստությու՞ն ունի՝ կազմված է 9 շերտից—մանր կամ խոշոր ավազալիցքերից, վորոնք մեջ ընդ մեջ ձեկված են կավաշաղախով (Տախտակ VI):

Իսկ կուրգանի մնացող — դամբարանին կոնցենտրիկ — մասը, կուրգանի մասսիվը՝ կազմված է դեղնահողից, վոր տեղական հողն է. սրա տակ ավազաշերտ է, իսկ վերևից, հատկապես կուրգանախմբի ներքին մասերում — խակի գույնի հողաշերտ, վոր բունում է կուրգանի լանջերը և ստորոտը՝ դարձնելով նրան ավելի լայնանիստ. (Տախտ. V և VI):

Կուրգանի ամբողջ լիցքը հաստատուն պահելու, նրա սահունի առաջն առնելու համար՝ կուրգանի ստորին մասը շուրջանակի ամուր կապված է գոթիանման քարաքարով, վորը իր հատակով (հաստությամբ) հասնում է մինչև գետինը և ունի 3 մետրից ավելի լայնությու՞ն (Տախտ. IV): Այդ գոթին, ինչպես հիշված է վերևում, շարված է մանր ջրաքարերով, բացի վերևի յեղերաշարքից, վոր չէ՛ղտ բազալտի ավելի խոշոր կտորներ ևն, և ամբողջն ամուր պնդացրած է կավաշաղախով (Նկ. № 6):

Այս ձևով ահա կառուցված կուրգանը արտաբան ամբողջովին ավաղած է կավաքաղախով, վորը կազմում է նրա վերին շերտը և ունի 20—25 սմ. հաստությու՞ն—վերից վար հետդհետե ավելի թանձրացած:

Ինչպես ասացի, կուրգանի կենտրոնական մասում, նրա հողաթմբի տակ, գտնվում է քարաքար պատվարը, վորը իր ուղղությամբ ձևավորում է բուն դամբարանը— շրջապատերով նրան բոլոր կողմերից: Սա ներսից մատավորապես քառակուսի է, մի քիչ յերկարացած հյուսիս արևելք— հարավ արևմուտք ուղղությամբ, իսկ դրսից—ավելի կոտորացած է, վորովհետև արևմտա-հյուսիս և նրա դիմաց արևելա-հարավային կողմերի շարվածքները զույգ են, վորը և արտաքուստ մտավորապես շրջանաձև է դարձնում ամբողջ պատվարը: Շարվածքը թեղանման տեսք ունի—մինչև 75 սմ. բարձրությամբ, այսինքն ներքին մասը լայն, բայց դեպի վերին



յեզրքը գնալով հետզհետե նեղանում է. արևմտյան անկյունում յերեք հատ համեմատաբար ավելի խոշոր քարեր են դրած մի շարքի, վոր գուցե մուտքի նշանը լինի: Այս քի բաշարը դրված է ուղղակի խամ հողի—գրունտի վրա (նկ. № 8, Տախտ. VI գծանկար):


Այստեղ անսովոր նորոթյունն այն է, վոր այս թեղանման շարվածքի վերին մասի քարերը, ինչպես նաև դեպի ներսը—դամբարանը կողմը նայող ամբողջ յերեսի քարերը



Նկ. 9. Բ. Կուրգանի պեղումը. «աղբետանման» նուրթի բացումը.

ծածկված են ինչվոր սպիտակավուն նյութի բարակ շերտով, նման աղբետուի, գուցե առաջացած բուսական նյութերի քայքայումից կամ մի այլ ինձ անհայտ պատճառից, բայց մոխիր չէ (նկկ. 9 և 10ա):

Բուն դամբարանը, վոր գտնվում է քարաշարի ներսում, քառանկյունի ձևով կտրված է հողի մեջ (4×2,80 մետր): Դամբարանի բերանը ծածկված է կավաշաղախով (մոտ 25 սմ. հաստ.). սրա տակ, հյուսիս-արևելյան կողմի անկյուններում, հորիզոնական ձևով շարված քարաշերտ է, վորի




Տախտ. IV Табл.

6. Կուրգանի պեղումը. Раскопки 2 го кургана  
Կուրգանի բերանի պեղումը





1950  
CO-DO





“F” ԿՈՒՐԳԱՆԻ ՊԵՂՈՒՄԸ

ՋԵԱՍՏՈՒՆԻ ԳՆԱԳԻՏ. ԶՈՒՄ

ԿՏՐՎԱԾՔ ԵՎՑ Ե-Գ



ԿՏՐՎԱԾՔ ԵՎՑ ABCD




ՀԱՅԿՍՏԱՆ 1931 թ.

ՋԵԱՍՏՈՒՆԻ ԳՆԱԳԻՏ. ԶՈՒՄ

Բ՝ ԿՈՒՐԳԱՆԻ ՊԵՂՈՒՄԸ

/ԶԿԱՌՆՈՅԻ ԳՆԱԳԻՑ. ՁՈՒՄ/

ԿՏՐԿԱՅՔ ՈՒԷ a-a'




ԿՏՐԿԱՅՔ Ե-Ե'








ԿՏՐԿԱՅՔ Ը-Ը'



ԿՏՐԿԱՅՔ Դ-Դ'



ԿՏՐԿԱՅՔ Ե-Ե'




ՆՈՏԱԲԵՐ 1931 Ք.

ՓՈՒԿԱԳՐՈՅ ՅԵՆ ԳՈՅՑ ԳՈՒ. ՆԱԿԿԱՆՔՅԱՆ

Տարբ. VI Табл.

Բ. Կուրյանի պեղումը, Раскопки 2-го кургана. Զ. Կ. Կուրյանի (Գժանկարի աջ կողմում՝ շերտերը)

շարունակութիւնն ամբողջ քառանկյունու մեջ՝ ավազած է  
ցեխով, հասարակ հողի շաղախով: Դրանից հետո անմիջապէս  
սկսվում է մոխիր, վորը խառն է մանր ու խոշոր ավազի  
հետ (մոտ 50 սմ. հաստ.) և վերջապէս, ավելի ներքևում՝  
գտնվում է միանգամայն մաքուր մոխիր, վորը կազմում է




Նկ. 10 ա. Բ կուրգանից հանված իրական տվյալները.  
աղբիտտանման նյութը.

մոտ 25 սմ. հաստութեամբ մի շերտ: Մոխրի տակ հողի բնա-  
կան շերտերն են:

Հիշածս մոխրային շերտերի մեջ, գերեզմանի ամբողջ  
քառանկյունում, գտնվում են վոսկրներ. այդ վոսկրները մանր  
կտորներով են, անխտիր մանրացած, վառված-փոշիացած,  
այնպէս վոր չափազանց դժվար է նրանց հիման վրա վորո-  
շակի ասելնրանց պատկանելիութիւնը և թաղվածների քա-  
նակը (մարդու, կենդանու, և քանիսի): Այնուամենայնիվ,  
վոսկրային վորոշ կտորներից կարելի յեղավ պարզել, վոր  
ավելի վերևում (բարձրում) և արեմտա-հարավային և  
հարավային մասում ավազախառն մոխրի մեջ գտնվում են  
կենդանու (ավելի նման վոջխարի) վոսկրներ, իսկ դամբա-  
քանի արևելյան անկյունում մաքուր մանրացած վոսկրներ,  
վորոնց թվում և զանգի մասեր, ատամներ: Մարդու վոսկրը-  
նների մնացորդներ շարունակում են չերևալ շերտի ամբողջ


հաստության մեջ մինչև սաքուր մոխրի շերտը. այստեղ մարդու վոսկրները վոչ միայն արևելյան մասում, այլ բռնում են դամբարանն ամբողջովին: Չնայած մոխրի այդչափ հաստության, այնուամենայնիվ, պետք է յինթադրել, Վոր այստեղ թաղված է հրկիզման միջոցով մի մարդ միայն, նկատի առնելով վոսկրների քանակը, վոր մեծ է (նկ. 10բ): Մոխրի մեջ տեսնվում է բարձր չկա. (Դամբարանի պլան. տես Տախտ. VI.):



Նկ. 10 Բ Կուրգանից հանված իրական տվյալները. Վոսկրներ՝ մարդու և զոհի կենդանու.

Բուն դամբարանի ամբողջ բովանդակությունը կազմում են մոխրը և վոսկրները. իրական սվյալները չափազանց քիչ են և, ըստ յի.ևույթին, պատահական բնույթի, զբաղվեցին միայն մի հասարակ խեցիի բեկոր (իր №4) և 3—4 մանր կտորներից մի ինչ վոր քերամիքական ամանի մաս տերբակոտից, վոր շինված է չափազանց նուրբ բարակ պատեբրով և վողորկած-շիֆովկա արված՝ ըստ տեխնիկայի միանգամայն նույնացող միքենյան գործերի հետ (իր № 5): Միևնույն ամանի այլ վորեք մասեր չգտնվեցին: Այս հիմք է տալիս կարծիքը, վոր գերիզմանում գտնված այդ բեկորներն էլ զգվար թե համարվեն հատկապես զրված իրեր, այլ հավանաբար պատահական կերպով ընկած լինեն թաղումի փամանակ—կուրգանը կառուցելիս:

Նույն ձևով պետք է բացատրել նաև այն մյուս իրերի գոյությունը կուրգանի զանազան շերտերում, վոր մեզ հանդիպեցին պեղման ընթացքում (նկ. 10գ), այն է՝



Նկ. 10 գ. Բ. Կուրգանից հանված իրական տվյալները. քերամիկական բեկորներ.

1. Փոքրիկ որսիգաքար-քերիչի համառությամբ (скребок), սղիլյան տիպի, վոր գտնվեց կուրգանի վերին շերտում պեղումների հենց սկզբում (նկ. № 10գ իր № 1).
2. Կավե ամանի մի բեկոր, վոր գտնվեց կուրգանի ներսում, բայց գերեզմանի վրա, նրա արևելյան մասում (իր № 2).
3. Կավե հասարակ ամանի յերկու բեկորներ, գերեզմանից դուրս, հյուսիսային կողմում, քարաշարի արտաքին յեզերքին, կուրգանի լիցքի ամենաերկի շերտում (իր № 3).
4. Մի բեկոր կավե շատ հաստ ամանից—գուցե կարասի կամ ավելի շուտ վազայի կտոր, ըստ անշան կորություն — վորը շատ լավ թրծված է և արտաքուստ շիֆովկա արված, սա նույնպես գտնվեց կուրգանի ներսում գերեզմանի արտանույն քարաշարի հարավ-արևելյան մասում, շարվածքի տակ (իր № 6).
5. Վոսկրյա մի իրի փոքրիկ կտոր, թերթանման, նուրբ մշակված, յեզերքին գուգահեռ ունի մի զիծ թեթե ակոսանման գրոշմված-тиснение (իր № 7):

Ստուգում կատարեցինք նաև գերեզմանի արտաքին քա-  
րաշարի մեջ—պեղելով նրա զանազան մասերը ամենուրեք  
միտրինակ ձևով պարզվեց, վոր քարաշարը զրված է ուղ-  
ղակի խամ հողի (գրունտի) վրա և շարվածքն իր մեջ վո-  
չինչ չի պարունակում:

Այս բոլորից հետո անհրաժեշտ է նկատել, վոր դամբա-  
րանի մեջ այնպիսի իրերի բացակայությունը, վորոնք հատ-  
կապես զրված լինելու նրա մեջ (այդ թվում, իհարկե, և մի-  
տաղի իրեր), անշուշտ պետք է բացատրել ուստուալով՝  
կապված դիակի հրկիզման հետ:

Տերրիտորիայի ամբողջական հետախուզումը և Բ. Կուրգանի պե-  
ղումը, վոր կատարվեց Ա շխ. Ք ա լ ա ն թ ա ը ի ղեկավարությամբ, ող-  
նականները յեղել են յերիտասարդ դիտ. աշխատավորների ը. ը. Կ ա ը  
Ղ ա ֆ ա դ ա ը յ ա ն (մշտական) և Ա ը ա մ Հ ո վ հ ա ն ի ս յ ա ն. կուրգանի  
աշխատանքներին մասնակցել են նաև՝ ը. ը. Ս. Յ երեմյան (3 որ),  
Հ. Մ ա ն վ ե լ յ ա ն (3 որ), Ս. Բ ա ը խ ու ղ ա ը յ ա ն (2 որ) և Ս. Ձ ո լ յ ա ն  
(1 որ): Կուրգանի ավարտական չափազրույթն և դժանկարումը կատարեց  
ճարտարապետ Հ ո վ հ. Խ ա լ փ ա խ չ յ ա ն ը:

### III

Հնագիտական տերրիտորիայի ընդհանուր հետախուզման  
հետևանքով ձևավորված յերեք տարբեր հնագիտական կենտ-  
րոններից յեբբորդը Հռիփսիմե—Անասնաթաղի շրջանն է:

Հետախուզման համար նախորդք մատնանշված կետը  
Անասնաթաղ բլուրն էր (Գ. հ. քառ. 116 և 117), վորի  
վրան և շուրջը կատարված աշխատանքների արդյունքի մա-  
սին յես խոսեցի վերևում (եջ 16—18): Այս արդյունքն այն  
կարևոր նշանակություն ունեցավ, վոր միատիպ դամբա-  
րանների շարքը Անասնաթաղ բլուրից—արևելյան ուղղու-  
թյամբ հասավ մինչև թրձված կավե դազաղներով դամբա-  
րանների դաշտը առուի տակ (Գ. հ. քառ. 115, 114), վորոնք  
պեղման են յինթարկվել առաջներում՝ 26—28 թվականնե-  
րին. նույնիսկ ել ավելի արևելք—առուի գլխին (աջ ափին)  
բլուրի վրա (Գ. հ. քառ. 113) դարձյալ բացվեց դամբարան  
կարասանման դազաղով: Այստեղից մեծ տարածություն չե  
մինչև այն կետը, առուի յերկրորդ կամուրջի մոտ (Գ. հան.  
քառ. 112), ուր 1914—15 թվ. գտնվել է հուշարեն արձա-


նագրությունը—դամբարանային բովանդակությամբ: Բացի  
այդ, մենք տեսնում ենք, վոր այդտեղից հյուսիսային ուղ-  
ղությամբ ևս մինչև խճուղին, նույնպես դամբարանների  
դաշտ է, վոր կարելի է յեղրակացնել արտաքին վորոշ նշան-  
ների հիման վրա (յերկայնաձև փոքրիկ սալաքարեր դիք  
տնկված գետնի մեջ, վորոնց վերին ծայրերը հազիվ յերեկում  
են գետնահավասար), վորոնք այս ու այնտեղ պատահում են  
այդ ամբողջ տարածություն վրա: Այսպիսով այդ տարածու-  
թյունը արևմտյան կողմից գալիս միախառնվում է այն շրջա-  
նի հետ, ուր այժմ գտնվում են Այգեզորձական ընկերություն  
շինությունները, վորոնց կառուցման միջոցին 1930 թվին  
բացվեցին դամբարաններ խիտ շարքերով: Սա գտնվում է  
Հռիփսիմեյի ուղիղ դիմաց—նրա հարավ-արևելյան կողմից,  
խճուղու տակ, և ուղղակի միախառնվում է Հռիփսիմեյի վանքի  
շրջապատի հետ, վորը ամբողջական ձևով—ինչպես ցույց են  
տալիս նաև զանազան ժամանակներում պատահական գյու-  
տերը—կազմում է հեթանոսական քրիստոնեական խառն  
շրջանի դամբարանների դաշտ (նկ. 12):

Այսպիսով, մենք տեսնում ենք, մի ընդարձակ տարածու-  
թյուն, վոր Հռիփսիմեյից և ներկայիս վաղարշապատից  
եկսկիով դեպի արևելք նասնում է համարյա մինչև Չանգուի  
առուի թեքումը, վոր ունի մեկ կիլոմետրից ավելի յերկա-  
րություն և քիչ պակաս լայնություն—յերբեմն բռնված է յեղեղ  
բացառապես դամբարաններով. (տես Քարտեղ-Տախտ: I և II):


Դամբարաններն ամենուրեք միատիպ չեն. մինչև որս  
կատարված աշխատանքներով մեզ հայտնի են դարձել մին-  
չև հինգ տարբեր յիպեր, և նույնիսկ, ըստ յերևութիւնի, նրանք  
կազմում են վորոշ խմբավորումներ, այսպես՝

1. Հռիփսիմեյին կից (պեղ. 1930 թ.) խմբված են դամ-  
բարաններ յերկարաձև, արկղի նմանությամբ, կողք-կողքի  
կանգնեցրած սալաքարերով ձևավորված և նույնպիսի սա-  
լերով ծածկված վերեղից. սրանք բնորոշվում են փոքրիկ  
պակե սրվակներով, վորոնցից մեկ-մեկ հատ զրված է յին  
գերեզմաններում: Գտնված են բազմաթիվ զարդարանքներ  
տերրոլիկից, ազատից, ապակուց, արծաթից, բրոնզից—մա-

աանիներ, գեմմաներ, հուլունքներ, ֆիրուրս և այլն (նկ. 13ա, 14—15. տես Տախտ. VII—VIII, էջ 51):




Նկ. 12. Հսիփսիմեյի շրջ. Դամբարանների պեղումներ (1930 թ.)



Նկ. 13ա. Դամբարանների հինգ տիպեր. Արկղանման-սալազեն.

2. Նման առաջինին, սակայն բուն գերեզմանն առանց սալ քարերի, այլ ուղղակի կտրված հողի մեջ, վերելից ծածկած ուղերով. սրվակներ չունեն. գտնված լրերի մեջ (բրոնզե զարդարանքներ, հուլունքներ) կա նաև մի հռոմեական դրամ (տես էջ 51—52): Այդ տիպն Անասնաթաղինն է (պեղ. 1931 թ., քառ. 116, 117). (նկ. 13բ-գ):




Նկ. 13բ. Դամբարանների հինգ տիպեր. Հողը կտրված—սալածածկ.

3. Անասնաթաղ բլուրից դեպի արևելք ցածրահարթ տեղում, առուի տակ, խմբված են դամբարաններ հատուկ ձևի զազաղներով՝ մոտավորապես հման ներկայիս տիպին, սակայն շինված թրծված կավից, առանձին հարթ կափարիչով, վորի վերելից դարձյալ շարված են սալաքարեր: Ուշագրավն է, վոր այս տիպի դամբարաններում իրեր բոլորովին չեն գտնվում, բացառությամբ մի մի մետաղի իրի (4-5 կտոր-



ներով), վոր ըստ չեղևոյթին հայելի է (պեղված մի քանի նվազ՝ 1926-28 թվվ., քառ. 114, 115) (նկ. 13 Պ):


4. Վերին հիշված խմբից վոչ հեռու, առուի մյուս կողմում 1930 թվին բացվել է մի դամբարան, վորի դոզադը նույնպես թրձած կավից է, յերկարածե, սակայն նման խնոցու, կամ ավելի չուտ կլիսակոշիկի, բաշմակի նման. բերանը բռնում է յերկարության 2/3-ը, և յեղել է փակված առանձին աղյուսներով. առանց իրերի (նկկ. 13 Ե, 13 Է):




Նկ. 13 գ Դամբարանների հինգ տիպեր. Հոյր կտրված—սալածածկե

5. Միևնույն միջավայրում (քառ. 113-ում) մի այլ կարևոր թաղում, վոր բացվեց 1931 թվի պեղումների ժամանակ, կարասատիպ է, վորի բերանը մի ծայունն է և կոլոր, իսկ ինքն ըստ ձևի՝ ձվածիր, մի փոքր հուպ տված

դոտկատեղում: Արա մեջ գտնված են մեծ քանակությամբ դարգարանքներ—բրոնզից, թանգագին քարից (ոււբին\*), արծաթից՝ մատանիներ, գեմմաներ, վզի մանյակ, հուլունքներ և այլն. (նկ. 13 Չ, նաև նկ. 14—15. Տախտ. VII—VIII):




Նկ. 13 Պ. Դամբարանների հինգ տիպեր. Թրցված կավից դոզադանման




Նկ. 13 Ե. Դամբարանների հինգ տիպեր. Թրցված կավից—բաշմականման

6. Մյս դամբարանայլն հինգ տիպերին պետք է ավելացնել նաև հունական արձանագրության դամբարանը, վորից

վորեկ հեաք կամ տեղեկություն մեզ հասած չլինելով՝ անկարող ենք վորոշել նրա տիպը—արդյոք նման հիշածս տիպերից վորեկ մեկին, թե՞ մի այլ, նորը (տես էջ 12, 36, 52—53, նաև 66—70՝ Հավելված I.):



Նկ. 13 գ Գամբարանների հինգ տիպեր. կարասանման.



Նկ. 13 է. «Պարթեպական» կավե դազազ.

Թվածս առաջին չորս տիպերում ղլակները գրված են պառկեցրած մեջքի վրա, իսկ հինգերորդում—կոնչ ածած, նման սովորական կարասաթաղի:

Ուղղությունը բոլոր տիպերինն էլ ընդհանուր առմամբ արևելք—արևմուտք է (գլուխն արևմտյան կողմում, իսկ թրձած կալն յերկարածև դազաղներում—արևելյան կողմում), սակայն հաճախ մեծ թեքումներով դեպի հյուսիս, և ուղղակի հյուսիս—հարավ (գլուխը հարավում). կաշատատիպ թաղումի մեջ բերանը դարձած դեպի հյուսիս-արևելք:

Գամբարանների տիպերի այսպիսի բազմազանությունը, սակայն, չի բացասում նրանց բոլորի ներքին կապը ժամանակի տեսակետից: Նրանց վոչ միայն ընդհանուր ուղղությունը—գիրքավորումը, այլ գլխավորապես մեջը գտնված իրական տվյալները մասնանշում են մի ժամանակաշրջանի վրա, վորին պատկանում են բոլոր տիպերն էլ. դա հստակահան եպոխան է:

Այսպիսով ստացվում է մի բնդարձակ հանգստարան մի-եկնույն ժամանակաշրջանի, վորը ներկայացնում է մեծ քաղաքի նեկրոպոլ:

Պարզվում է նույնպես, վոր այդ քաղաքը վոչ մի դեպքում չէր կարող լինել իր այդ նեկրոպոլի արևելյան և հարավային կողմերում—վոր ամայի անապատ է—այսինքն ներկայիս Հնագիտական շրջանի մեջ, այլ նա անշուշտ տարածվելիս է յեղի նրա ուղիղ հակառակ՝ ներկայիս Վաղարշապատի—Հոփսիմեյի ուղղությամբ:

Ավարտելով Հնագիտական քաղանի ամբողջ սերիստիպի ընդհանուր դիտումն ու հետախուզումը և պարզելով նրա բնույթն, ու հնագիտական բովանդակությունը, տեսնում ենք, վոր նա բոս եպոխաների յեկ կոյսուրաների յերեք խոտ ու իրարից արբեր քաղանների է բաժանվում—


1. Ավարցնցի—Ներսեսյան շինարարության քաղան (Գեոգր. հան. I)
2. Հռոմեական եպոխալի քաղաքի մնացորդների քաղան, հատկապես նրա նեկրոպոլի, (Գեոգր. հան. III). յեկ
3. ավելի հին՝ կուրգանային շինարարության քաղան, (Գեոգր. հան. II):

Մրանք յերեքն էլ անկախ են մեկը մյուսից թե իրենց ներքին կապով—բովանդակությամբ և թե իրենց տեղով բռնած տարածությամբ:

Մի քիչ ավելի ծանոթանանք յուրաքանչյուրին:



որինակ և ներկայացնում մեր նոր նյութերի շարքում Շահապում (Կոտայք) բացված անյունապան սափորը, վոր դըրված է հատուկ քարե պահպանակի մեջ. այստեղ մոխրի և մարդու վառված վոսկրների հետ գտնվել է սիակ գործիքը



Նկ. 11. Աճյունապան սափոր՝ քարե պահպանակի մեջ՝ գտնված Շահապում:

կայծաքարից, վոր ատամնավոր է — սղոցի նմանությամբ. Սափորն ինքը թե իր ձևով և թե բարձր տեխնիկայով նույնպես հանդես է բերում նույնություն միքենյան կուլտուրայի մնացորդների հետ (նկ. 11):

«Տրիպոլյան» կուլտուրայի հայտնաբերումով, թեկուզ և իր տեխնիկայով բավականաչափ միտքինակ արտաձայնություններով, սակայն մի ամբողջութուն համարելն ու մի ծագում ու մի կենտրոն նրան վերագրելն իբրև ամբողջապես մի տեղի արտադրություն՝ թվում է, թե ապացույց է հարցի դեռ ևս պրոբլեմատիք լինելուն, և այս անգամ յիժե ընդունելու իննք նրա ծագումը մի վորոշ կետում, վերն է այդ կետը — եղիյան շրջանը, թե՛ Միջագետքը (Սուզա — Երամ, Սուսլը), Յեգիպտոսը, Փ. Ասիա — Հայաստանը:

«Մլրինյան» քերամիկայի մի հայրենիքի տիրող տեսակետն, անդուշակարիք ունի վերանայման:

Կուրգանի դամբարանի մեջ առանձնապես աչքի է ընկնում մոխրի չափազանց շատերունը, վոր կազմում է հաստ շերտ: Այս յերևույթի բացատրությունն ըստ իս գտնվում է հենց իր մեջ. մոխրի բոլորովին չունի իր մեջ ածուխ, մենք չգտանք ածուխի և վոչ մի հետք: Այս հանգամանքը պիտի ման միջոցին յենթադրել ավեց ինձ համարելու մոխրին առաջացած վոչ թե վայտից, այլ ծղոտից կամ ուղղակի արթարից: Այս յենթադրությունը հաստատվեց մոխրի քիմիական անալիզով, վոր կատարվեց Լենինգրադում՝ Նյութական Կուլտուրայի Պատմություն Ակադեմիայի Հնագիտական Տեխնոլոգիայի Ինստիտուտում: Այս դեպքում, իհարկե, դառնում է հասկանալի նաև մոխրի մեծ քանակը, վոր կարող էր ստացվել անգամ մի մարդու և հետը դրված գոհի կենդանու (կենդանիների) հրկիզումից:

Աթարի ներկայությունն այստեղ դամբարանում և, ուրեմն, նրա գերակշռող գործածությունը այն ժամանակվանքի մեջ, ավյալ հասարակություն կենցաղն ու տնտեսական պատկերը բնորոշելու տեսակետից, հանդիսանում է ուշագրավ հանգամանք:

Այս հանգամանքն ահա էլ ավելի է խորանում մի այլ մանրամասնությամբ՝ իրական ավյալով, վոր մենք գտնում ենք կուրգանի մեջ — նույնպես առաջին անգամ նկատվող մեր հնագիտական իրականության մեջ — այն սպիտակ ագրեսանման շերտ, վոր բռնում է դամբարանը յեզերափաթեցանման շերտ, վոր բռնում է դամբարանը յերկրաբանների նկ. 10 ա): Այդ տարրինակ նյութն սկզբում յերկրաբանների կողմից ընդունվեց իբրև իսկական աղբատ, բայց ապա — մանրադիտական հետազոտման յենթարկվելուց հետո — պարզվեց նրա զուտ բուսական ծագումը: Այդ նյութի գույնը, տեսքը, ինչպես նաև հակահրային հատկությունը, բացատրվում է նրանով, վոր նա ներկայումս միանգամայն քատրվում է նրանով, վոր նա ներկայումս միանգամայն քացաման վիճակումն է գտնվում, բայց իրեն կազմությամբ նա ամբողջապես ներկայացնում է կուլտուրական բույսերի հացահատիկային — հատկապես ցորենի — և այլ խոտբույսերի հացացած մասեր: Ահա այս արդյունքը ավեց ը. Սոֆիա Թամանյանի (Ղամբարյանի) անատոմիական հետազոտու-

թյունը, վոր առաջինը քննության առաջ այդ նյութը, և վորը հետո միանգամայն հաստատուեց Անիտիքրատում Հնագիտական Տեխնոլոգիայի Ինստիտուտում կատարված աշխատանքով: (Տես Հավելված II — «Բրածո ցորեն կուրպանի պեղումները» էջ 77—82):

Հացաբուսերի, մանավանդ ցորենի ներկայությունը դամբարանի մեջ, վոր բացատրվելու յե ուսուարով—կապված տիրող կրոնական հասկացությունների հետ—ի հայտ ե բերում, նախ և առաջ, տվյալ հասարակության գլխավոր պատճառները, հողագործության—իրբև արտադրության դեկավար ձևի—ծաղկած վիճակը, վոր այդ միջավայրի պայմաններում կարող եր լինել միմիայն կատարյալ վոռոգման սխեմի առկայությամբ, ինչպիսին մենք պատկերացնում ենք տոհմական հասարակարգի պայմաններում, վորը հաստատվում ե և այլ բազմաթիվ տվյալներով\*): Միաժամանակ հասկանալի յե դառնում ընդհանրապես պողպատեական կուրտուրայի մինչ այն աստիճան դարգացումը, վոր խնայվում ե պողպատե ծառը իրբև վառելիք գործածելը: Աթարի դոմինալ դրությունը գուցե ապացույց ե նաև անտառների չգոյության, կամ չափազանց սակավության, յերբ ամբողջ փայտը կարող եր միայն շիանարարության վրա գործադրվել:

Յեղած բոլոր տվյալները—գլխավոր վառելիք իրբև չգնելը դամբարանում, հացաբուսերի մասնակցությունն ու գերխաղալը ուսուարի ժամանակ—ուհալ կերպով բնորոշում են Հայաստանի հին բնակչի, այս դեպքում տոհմական հասարակության, իդեոլոգիան:

Կուրպանային դամբարանը, վոր սովորաբար կառուցվում եր համայնական ձևով, իրբև ընդհանրապես համայնական աշխատանքի արդյունք, համեմատությամբ այլ ավելի հասարակ ձևով շինված սովորական դամբարանների՝ ունի հատուկ նշանակում իրբև տոհմապետի—տոհմի կամ տոհմերի առաջնորդի—գերեզման: Նկատելով պեղված կուրպանն իրբև այդպիսին, այն ե տոհմապետի կամ նահապետի դամբարան:

\*) Աշխ. Քալանթար — Մի հնագույն ջրաբաշխական սխեմա Թուրք Հայաստանում (տղ.):

և հավաքելով այն՝ մյուս համանման (այսինքն տոհմի մասնակցությամբ կառուցված) հուշարձանների հետ միևնույն տոհմական միջավայրի այլ հարևան շրջաններում, տեսնում ենք, վոր ավելի լեռնային մասերում, Արագածի մեջքում և ստորին ու վերին լանջերում, նրանց համապատասխանում են գուտ քարաշին կուրպաններ (քարաբլուրներ առանց վերնահողի), նաև մեզավելիքները առանձնապես աչքի ընկնող գլխիններ, կրոմլեխներ ու մեհնիլներ, և անգամ «վիշապարձան» դամբարաններ, վորոնք բոլորն ել գլխավոր յեն իրբև առաջնորդների գերեզմաններ, և առաջինների հետ միևնույն ժամանակաշրջանին պատկանող գործեր:

Դաշտային մասի և լեռնային շրջանի դամբարանային հուշարձանների միջև առ յերեւոյթ խոշոր տարբերությունը մեծ չափով բացատրվում ե առաջացած իր իսկ միջավայրի տրամադրած շինանյութի ազդեցությամբ՝ գուտ քարային շինք—քարքարոտ շրջաններում, և միայն հողից—գաշտային մասում, ուր քար չկա. այս հանգամանքը խոշոր գերե յե խաղապել թե նրանց տիպերի մշակման և թե կառուցման յեղանակի մեջ. թեկուզ և թվում ե թե ընդհանուր տիպական կապն այնուամենայնիվ պահպանված ե ըստ հնարավորի. այսպես՝ մեր կուրպանների արտաքուստ գոտիանման քարաշարը (Չրային բռնաքարերով, վորոնք միայն հանդիպում են կուրպանների անապատային շրջապատում) վորքան ել կոնստրուկտիվ նշանակություն ունենար կուրպանի մեջ, այնուհանդերձ նա կրումլեխի արտահայտումն ե. մի գետալվորով գուզորդված ենք տեսնում հիշածս բոլոր մեզավելիքյան տիպերը:

Այս հանգամանքն ահա ի նկատի ունենալով, մենք կուրպաններ շինող տոհմականների բնակարանները ևս նույն ձևով ենք պատկերացնելու—հողաշին, գուցե փայտե սյուներով և գերաններով կապակցված, բայց, հավանաբար, գետնահարկ, ուստի և առանց արտաքին նշանների\*):

\*) Մեր այս յենթադրությունը բնակարանի տիպի վերաբերյալ հաստատուեց 1934 թ. մայիսին Անիտիականի մոտ բացված նախախորհրդական բնակատեղիի իրական տվյալներով («Թորհ. Հայաստ.» № 115. 21 Վ. 34 թ.):

А. Калантар — Открытие дохалдского поселения близ Ленина

Կուրդաճաններից հետո, յերկրորդը ժամանակի հերթա-  
 փանությամբ, հուռմեակաճ շրջանի քաղաքի նեկրոպոլն է, վորի  
 հետ մենք ծանոթացանք վերևում (եջ 16—18 և 36—43):

Մենք տեսանք, վոր փաստական բոլոր ավյալները միա-  
 բերան աղացուցում են, նախ և առաջ, այդ ընդարձակ  
 նեկրոպոլի հոռմեական եպոխային պատկանելը: Այդ տը-  
 վյալները նյութական կուրտուրայի այն մնացորդներն են,  
 վորոնք մինչ այժմ կատարված աշխատանքներով հասել են  
 մեր ձեռքը: Հիշենք դրանցից գլխավորները—

1. Համառոտակի նկարագրածս դամբարաններում ֆիկ-  
 սացիայի յենթարկված գերակշռող թաղման ձևը (գիրքը—  
 մեջքի վրա, ուղղությունը, զարդարանքների տեսակները,  
 կճուճների բացակայությունը և այլն)՝ հեթանոսական—  
 քրիստոնեական անցման շրջանի սովորական տիպն է:

2. Դամբարաններում հայտնաբերված զարդարանքներն  
 իրենց ծագումով—տեղական, ընդհանրապես արևելյան, թե  
 արևմտյան, մանավանդ դրանցից գեոմաների խոշոր մասն  
 իրենց տիպով և մոտիվներով, ապակե զարդարանքները,  
 ապակե սրվակները, ֆիբուլան և այլն (տես նկ. 14—15,  
 16, Տախտ. VII—VIII)\* վոչ միայն ընդհանրապես համա-  
 պատասխանում են այդ ժամանակաշրջանին, այլ մեծ մա-  
 սամբ իրենց թե տիպով և թե անգամ ծագումով կարող են  
 ճանաչվել հունա-հռոմեական—իբրև նմանողություն, կամ  
 ուղղակի հոռմեական արտադրություն:

3. Վերջտպես Անտանաթաղի մի դամբարանում գտնված  
 հուռմեակաի յրամբ, վոր՝ թեկուղ շատ վատ պահպանված—  
 ժանգակեր վիճակում, սակայն Ալ. Նիկ. Ջոզրաֆի (Լենին-  
 գրադ, Պետ. Երմիտաժ) սիրալիբ աջակցությամբ, նրա կող-  
 մից հմտորեն մաքրված ներկայումս և վորոշված՝ սուբերատ  
 դինար է (պղնձե դրամ արծաթապատ, վորի արծաթն արդեն  
 վոչնչացել է)—հազվագյուտ, պատկանում է Վեսպասիանին  
 կամ Տիաին—69 կամ 71 թվականի մեր թվ. (այս թվերի  
 դրամները ըստ տիպի միտրինակ են, բայց ավելի Տիտի

\*) Ամբողջությամբ կհրատարակվին առանձին՝ «Հին Վաղարշապատի  
 պեղումների նյութերը» հետ միասին:

Յեւ յեթե այդպիսիների գտնված տեղերը պարզելու  
 հնարավորությունը դեռ ևս չունենք առանց հողային հա-  
 մապատասխան աշխատանքներ կատարելու—իհարկե բնավ  
 չկասկածելով նրանց գոյության մասին—գոնե այն կենտ  
 ու հատ ժայռամասիվները, վորոնք կան հարթավայրի վրա  
 այտուալնաեղ այդ միջավայրում, պահպանել են իրենց վրա  
 գեանի յերևաին բաղմաթիվ հետքեր — կուրդաճանարա-  
 բության ժամանակաշրջանին վերաբերող՝ վորոնք մեզ ներ-  
 կայացնում են Հայաստանի տոհմական հասարակության  
 իդեոլոգիական պատկերը: Այս տեսակետից Սև ըլուրը Սև  
 ջրի վրա (Զեյվայի մոտ), ինչպես նաև Արմավիրի բլուրը և  
 նրա շրջակայքում «Սըբ Դավիթը» իրենց մնացորդների կա-  
 բերությամբ—սիմբոլիկան փոքրվածքներով, ժայռագրու-  
 թյուններով—հնագույն անծանոթ գրերով և այլն՝ անպայ-  
 ման պետք է խաղացած լինեն կենտրոնական դեր իբրև  
 կուրտի վայրեր\*):

Ի մի ամփոփելով բոլոր ավյալները, մենք յեզրակացնում  
 ենք, վոր կուրդաճանարարության ժամանակաշրջանը  
 պետք է վերագրել յերկրորդ հազարամյակի վերջին (մեր  
 թվ. առաջ), կամ առաջին հազարամյակի սկզբին. բայց վոչ  
 ուշ քան VIII-րդ դարը մեր թվ. առ., քանի վոր այդ ժամա-  
 նակ խալդական արշավանքների հետևանքով առաջացած  
 յերկարատև յերբուռն քաղաքական կացությունը չէր կարող  
 չանդրադառնալ կուրդաճանարարության վրա տեսնիկայի  
 և գործադրված դանդաղ պրիոմների տեսակետից, ինչպես  
 ներկա դեպքում մենք այստեղ տեսնում ենք, վորը միան-  
 գամբայն հանգիստ ու ապահով կյանքի գրոշմն է կրում իր  
 վրա:

кава — „Проблемы Истории докапиталистических обществ,, ГАИМК  
 № 9 10, 1934 г. Л. М. էջ 166—8.

\*) Աշխ. Քալանթար—Սալդիբեն մի նոր սեպագիր արձանագրություն  
 գտնված Ջանֆելդա գյուղում—էջ 17. (Որագիր Հ. Հն. Պ. Կոմիտեյի № 4,  
 1930 թվ.):

A. Kalantar-Inscriptions d'Arménie en caractères inconnus, Revue  
 Archéologique, 1929. p. 43—45.

համար Ե բնորոշ, ինչպես տալիս և Cohen—Monn. Imperiales, Կ. I, Եջ 371, № 43, նաև Եջ 431, № 24):

4. Մեծ կարևորություն և ներկայացնում էին Վաղարշապատի առեղծվածի լուծման համար նախկին գյուտերից վերևում հիշածս հունարեն արձանագրությունը ևս, վեր թեկուզ բացված Ե 1914-1915 թվերին, և ունեցած իր նախնական հրատարակությունը\*), ստիպյալ մնացած անուշագիր և չոգտագործված ըստ արժանվույն, (պահվում էր Եջմիածնի Հնագրիտ. Թանգարանում, ներկայումս Յերևանում՝ Կուլտուր — Պատմական Թանգարանում):

Այդ արձանագրության ընթերցում — ուսումնասիրությունն այժմ կատարված և ակադեմիկ Ս. Ա. Ժեբեկյանի կողմից, վոր և հրատարակում ենք ներկա աշխատություն հետ միասին — «Հունարեն գամբանական արձանագրությունը գրած Վաղարշապատում», (տես Հավելված I, Եջ 75): Արձանագրությունն իր բովանդակությամբ գամբարանային է, գրված մի սալանման քարի վրա — կամբարվուն տուֆից, վոր ըստ ձևի անշուշտ կազմել և գերեզմանարձանի մաս: Հեղինակն և հոսմայեցի գինվորական տրիրուն Ելի Վալենտ, վոր գրել և իր մահացած կնոջ և աղջկա հիշատակին: Ըստ հնագրական առանձնահատկությունների արձանագրությունը պատկանում և մեր թվ. II-րդ դարու յերկրորդ կիսին, կամ III-րդ դարու առաջին կիսին: Ինչպես ասացի (Եջ 12, 36-37, 41) արձանագրությունը գտնվել և Եջմիածնի Առուի շինությունն միջոցին, նրա յերկրորդ կամուրջի մոտերը (Հոսիսիմեյի և Զվարթնոցի մեջ տեղում, մոտավորապես հավասար հեռավորություն վրա նրանցից. Գեոդ. հան. քառ. 112), ուր յեղել և ուրեմն և Ել. Վալենտի կնոջ ու աղջկա գամբարանը: Սա հին քաղաքի նեկրոպոլի տարածման ամենահեռավոր կետն և արևելյան կողմից, վորքան մինչ այժմ հայտնի յե մեղ. (տես Քարտեզ-տախտ. II):

Այս արձանագրությունը ըստ հաշվի յերրորդն և, վոր մինչ որս գտնված և այս միջավայրում և գրված և հոսմայեցիների կողմից. մյուս յերկուսը լատիներեն, վոչ գամ-

\*) М. Ростовцев — Новая греческая надпись из Эчмиадзина. Хр. Восток, т. III, вып. III, Եջ 243-8.

բանային իրենց բովանդակությամբ, այլ շինարարական, գտնվել են Վաղարշապատի մեջ և վերաբերում են հենց նրան. յերկուսն ևլ պատկանում են III-րդ դարի յերկրորդ կիսին — մեր թվ. 175 և 185 թվականներին: Այդ արձանագրություններն ներքին կապը պարզ և միանգամայն, առաջին յերկուսից արդեն հայտնի յեր մեղ, վոր Հին Վաղարշապատում այդ ժամանակ գտնվել և 15-րդ Ապալոնյան լեզվունը. այդ միևնույն լեզվոնի տրիրուն և նաև մեր այս յերրորդ արձանագրության հեղինակ Ել. Վալենտը:

Տեղի ընդհանուր հետախուզումից մենք տեսանք, վոր նեկրոպոլի արևելյան և հարավ-արևելյան շրջապատը մինչև Զվարթնոց և կուրգանները — անապատային վայր և, առանց վորևե կուլտուրական հետքի. ուստի վոչ մի իրական հիմք չկա նեկրոպոլի քաղաքը — այսինքն Հին Վաղարշապատը — վորոնեղու այդ շրջանում և վոր նրա միակ հավանական տեղը նեկրոպոլից արևմուտք և, ներկայիս Վաղարշապատի — Հոսիսիմեյի ուղղությամբ: Այստեղ միայն կարող էր նա տեղավորված լինել, ըստ ամենայնի նույնանալով իր տեղով այժմյան Վաղարշապատի հետ:

Այլ յեղրակացություն գովար և հանգել պատմական Վաղարշապատի տեղի վերաբերմամբ, ի նկատի ունենալով նաև վերոհիշյալ յերկու լատիներեն արձանագրությունների գյուտը Եջմիածնի տաճարի շրջակայքում, վորի գտնված վայրը, անշուշտ, ունենալու էր կենտրոնական դիրք հին քաղաքի վերաբերմամբ, վորտեղ, իբրև իրենց գորանխատում, հոսմայեցի գորավարները կառուցել են կարևոր շենք — ամբողջություն, հավանաբար միջնաբերդ: \*)

Այդ են հաստատում նաև մեր մատենագրական ավյալները — արքունի ապարանքը գնելով քաղաքամիջում, ուր և բերդն և — միջնաբերդը (Աղաթանգ. 178, 180, 192), նույն քաղաքամիջում, արքունի ապարանքի մոտ գնելով նաև կաթողիկեն — տաճարը (Աղ. 735-6): \*\*) Այդ միևնույն տը-

\* М. Ростовцев — Новые латинские надписи с юга России, надпись из Вагаршапата. Изв. Археол. Ком. 1909 г; вып. 33, стр. 5-8, 15.

\*\*). Այսպիսով մեղ համար պարզվում և, վոր Հին Վաղարշապատն ունեցել և բերդ, հատկանալով այդ միջնաբերդի իմաստով, քանի վոր նա





Հին Վաղարշապատի նեկրոպոլը յեթե իրեն բովանդակած  
երական տվյալներով հնարավորություն է տալիս վորոշելու  
քաղաքի կյանքի տևողությունը—մինչև հինգ դար, ապա  
նա իրեն ընդարձակությամբ (1.10.×0.80 կիլոմետր) և  
զամբարանների խիտ դասավորությամբ զաղափար է տալիս  
բնակչության բավականաչափ մեծ քանակի մասին: Բայց ավելի  
կարևորն այն է, վոր այդ հոծ ազգաբնակչությունն ըստ  
յերևույթին շատ բազմատարր ու բազմաբղետ պատկեր ուներ:

Այդ մասին դամբարանային հինգ տիպերը (գոնն վոր-  
քան առաջմ մեզ հայտնի չեն) շատ բան են ասում: Տեսնել  
նրանց մեջ ժամանակագրական հետևողականություն՝ չի  
կարելի, քանի վոր իրենց բովանդակությամբ նրանք հեր-  
քում են այդ և, ընդհակառակը, ժամանակագրական վորոշ  
տարբերություն հայտնաբերում այս կամ այն միևնույն  
տիպի տարբեր որինակների մեջ: Չի կարելի բացատրել  
այդ նաև սոցիալական շերտավորմամբ՝ առանձին տիպերը  
վերագրելով այդ ժամանակվա հասարակության տարբեր  
դասակարգերին, քանի վոր սոցիալական տարբերությունը  
ակընհայտ է հենց յուրաքանչյուր տիպի բնագավառում, ուր  
առանձին որինակներ—հարուստ և աղքատ իրենց բովան-  
դակությամբ— պերճախոս կերպով ի հայտ են բերում  
այդ տարբերությունը: Ամենայն հավանականությամբ այս-  
տեղ ներկայացված ենք տեսնում այն ետնիքական և կրո-  
նական միավորները, վորոնցից, ըստ յերևույթին, կազմված  
եր այդ քաղաքի բնակչությունը:

ренского о постройке Вагаршом стены и вала основано, повиди-  
мому, не на исторических данных, а на неправильной интерпретации  
названия Вагаршапат“. („О торговле и городах Армении“, 93): Սո-  
քնադու խոսքերի նման ինտերպրետացիան յետ համարում էմ անընդու-  
նելի, քանի վոր հարցի ելույթունը չի կայանում նրա մեջ թե Սորենացին  
հասկացել է թե չի հատկացել «պ ա ա»—«բ ա դ» (քաղաք, բնակչություն)  
խոսքի իմաստը, այլ նա տալիս է ավանը (այսինքն՝ տոանց պարսպի  
բնակատեղին) քաղաքաշինարարության պրոցեսը, ճիշտ այն-  
պես, ինչպես նա այդ անում է մյուս բոլոր նման դեպքերի վերաբեր-  
մամբ—Մծբին (Բ-ը-36), Յերվանդաշատ (Բ-ը-39), Վան (Ա. դեր-16) և  
այլն, վորոնք նույնպես պարսպվում են ու պատվարվում, թեկուզ և  
նրանց անվան կազմության մեջ չկա «պ ա տ» խոսքը:

Սա փաստական արտահայտիչն է այն իրական գրության,  
վոր իրոք ունենալու յեր պատմական Վաղարշապատը: Մենք  
դեռ ևս հնարավորություն հուսնենք մասնանշելու թե հատ-  
կապես վճիռ տիպն այդտեղ ապրող «ազգություններից»  
վորին կարող եր պատկանել, սակայն պատմական և իրա-  
կան բոլոր ավյալներն ի նկատի ունենալով, գոնն հաստա-  
տապես կարող ենք ասել, վոր այդտեղ ապրել են հայեր,  
լատիններ, հույներ, պարթևներ, հրեաներ, ասորիներ, ան-  
շուշտ կլինեյին ռբրիշները ևս. հրեաների մասին հաղորդում  
է Սորենացին և նրանց գաղթեցումն ու բնակեցումն այդ-  
տեղ վերագրում է Տիգրան Մեծին:

Պատմական Վաղարշապատը այսպիսի միջազգային բնույ-  
թը և ըստ ամենայնի բարդ հասարակական հարաբերու-  
թյունները քաղաքական, կուլտուրական ու իդեոլոգիական  
հողի վրա, մի կողմից պարթև—հռոմեական հակամար-  
տության, իսկ մյուս կողմից արտաքին լայն հաղորդակ-  
ցության—շվեդներին, ինչպես նաև քրիստոնեական—հե-  
թանոսական ներքին պայքարի հետևանքով՝ ուժեղ արտա-  
հայտված ենք—տեսնում իրական սվյալներով: Այս տեսա-  
կետից մանավանդ զարգարանքների բազմազանությունն  
ու նրանց շատերի ներմուծված լինելը՝ պարզ ապացույց են,  
վոր գոյություն է ունեցել զարգացած վաճառականություն.  
վոր գոյություն է ունեցել հանդես է յեկել վոչ մի որինակ  
մեռնող հեթանոսությունը հանդես է յեկել վոչ մի որինակ  
և ուժեղ կերպով, այլ անկման շրջանի արտահայտությամբ:


Իրական տվյալները մեզ լավ ծանոթացնում են տեխ-  
նիկական արտադրության հարաբերություններին հետ, սա-  
կայն դեռ ևս դժվարանում ենք վոչ տեղական իրենց ծա-  
գումով նյութերի ճիշտ սահմանորոշումը տալ. այսպես—ըստ  
այդ նյութերի հռոմեացոց դերը վոչ միայն քաղաքական,  
այլ նաև կուլտուրական ներքին կյանքում, իր հունահռո-  
այլ նաև կուլտուրական հարաբերությամբ, շատ ավելի յե նկատվում, քան  
մեզ կան բովանդակությամբ, շատ ավելի յե նկատվում, քան  
մեզ կարող ենք պատկերացնել գրական աղբյուրների հի-  
ման վրա: Ընդհակառակը, պարթևականը, վոր պետք է շատ  
ավելի լիներ մանավանդ ներքին կյանքում—կենցաղում՝  
առանձնապես աչքի չի ընկնում. այս բացատրվում է գուցե  
ավելի այն հանգամանքով, վոր նա անմիջապես չի յեն-

թարկվում մեր ճանաչմանը. մենք վատ գիտենք պարթևա-  
կանը, նա անվորոշ մեծություն է ընդհանրապես գիտու-  
թյան մեջ. բայց նա կն անշուշտ, և մեզ հարկավոր է պար-  
զել, աշխատել լուծել պարթևական պորբերը: Առ այժմ  
մեր նյութերի մեջ, իբրև պարթևական, կարող ենք մատ-  
նանիշ անել կավե թրձած դագաղները, ... այն հիմուն-  
քով, Վոր այդ տիպն իր անալոգիան ունի նաև բուն պար-  
թևական միջավայրում—Միջագետքում, Իրանում, սակայն  
այդ տեղերումն էլ յեղած որինակների անպայման պար-  
թևական լինելը վերջնականապես հաստատվելու խնդիր է  
դեռ ևս (նկ. № 12): Իժբախտաբար հենց այս տիպի  
դամբարաններում մեզ մոտ չեն գտնվում իրեր, սա-  
կայն մյուս դամբարաններում գտնված իրական ավյալնե-  
րից պարթևական—սառսնական են, անպայման, գեոմա-  
ներից նրանք, վորոնք ունեն սապատավոր յեղի նկար  
(Տախտ. VII—VIII. նկ. 4). գուցե և բրոնզե մատանին պալ-  
մեռի ծագվեցնկարով, ալի տեղում (Տախտ. VII. նկ. 2):

Վորքան էլ մյուսներից դժվար լինի բոլորովին առանձ-  
նացնել, սակայն ավելի շուտ տեղական—հայկական ենք  
համարելու այն գեոմաները, վորոնք ունեն՝ այժի նկար  
բրոնզե կնիքի վրա (VII. նկ. 1). քառաթև նկար (?) կնիքի  
վրա՝ շինված լեռնային խրուստակից (VII. նկ. 3). ձկնանման  
նկար սերգոլիկի մատանու վրա (VII. նկ. 5). ինչպես նաև  
խաղողի վողկուզի նմանությամբ արծաթի գլխտերը (VII  
նկ. 7, 8).—Ի նկատի ունենալով սրանց մոտիվների անհամե-  
մատ ավելի հին ծագումը Հայաստանում, գուցե պետք է ավե-  
լացնել նաև հուլունքների վորոշ տեսակներ և ազատից շե-  
նած մատանիները (Տախտ. VIII. նկ. 11):

Նյութերի խոշոր մասն, ինչպես ասացի վերևում, հուճա-  
հոռմեական կուլտուրայի հետ է կապվում. այսպես, նկ. 9  
և 10. գեոմաները արծաթ մատանիների ախների վրա, վոր  
հավանաբար Աֆինա-Պալլադան է սազավարտով և վահանով  
(VII. նկ. 9). և Դեմետրիան ցորենի հասկը ձեռքին (VII.  
նկ. 10. նույնը տես մեծագիր նկ. 16), ապակե սրվակները,  
վոր հոտավետ յուղերի ֆլախոններ են (VIII. նկ. 12),

ընդհանրապես ապակե դարդարանքներ—հուլունքները, բրոն-  
զե ֆիբուլան(VII-6) և այլն:




Նկ. 14. Տախտ. VII. Զարդարանքներ Հոփսիժեյի շրջանի դամբարաններից:  
Նկ. նկ. 1, 2, 3, 4—դամբ. VII, 5—դամբ. IX, 6—դ. X, 7—դ. III, 8, 9 և 10—կարասանման  
դամբարան

Այսպիսով հանդում ենք այն յեղրակացության, վոր  
ստուգողական պեղումներով պարզորոշված նեկրոպոլը («մե-  
ռածների քաղաքը») պատկանում է պատմական Վաղարշա-  
պատին: Բաղախր տարածվել է նեկրոպոլի արևմտյան կող-  
մում և այսպիսով նա ըստ տեղի նույնպես է նեկրոպոլի Վա-  
ղարշապատի հետ: Հին քաղաքը, վորի կյանքը ըստ իրական  
ավյալների, չափվում է առնվազն I—V դարերով, այ-  
սինքն ուղիղ Արշակունիների ժամանակաշրջանով, հիմնը-



Տախտակ VIII. (նկ. 15) Ջարգարանցիներ Հսիտիսիսիկ շրջանի գամբարաններէր.



նկ 16. Կնոջ նկար, քանդակված № 10 մատանու ակի վրա (աբտանկարված մանրալիտակի տակ ընկ. Տարադրոսի ձեռքով)

ված և վոչ թե 11 դարում (մեր թվ.), ինչպես ընդուն-  
ված և համարել, այլ ավելի առաջ: Ունեցել և մեծ և բազ-  
մացել ազգաբնակչություն, վոր և իր ներքին կյանքով ու  
արտաքին վաճառականական յնուուն հարաբերություն-  
ներով—միջազգային բնույթ և ավել նրան: Հերթական իրն-  
գիր և հանդիսանում լուծել պարթևական պրոբլեմը, վորն  
առ այժմ մնում և մթության մեջ. իսկ հունա-հռոմեականի  
ուժեղ արտահայտությունն առաջադրում և հասարակա-  
կան—անտեսական ֆորմացիան ճիշտ վորոշելու խնդիրը  
հայոց պատմության տվյալ եպոխտում:

### ԶՎԱՐՔՆՈՅԻ—ՆԵՐՍԻՍՅԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կուրգանախմբի և պատմական վաղարշապատ քաղաքի  
նեկրոպոլի բնորոշումով բավականաչափ պարզվում և ար-  
դեն Զվարթնոցի կոմպլեքսի ինքնուրույնությունը: Նա  
անմիջականորեն կապ չունի վոչ կուրգանախմբի հետ, վոր  
իրանից ավելի հարավ և գտնվում, և վոչ ևլ արևմտյան կող-  
մից նույն իսկ վաղարշապատի քաղաքատեղիի հետ:

Ինչպես պարզեցինք վերևում (եջ 19—23), նրա արտաքին  
պարսպից—պատվարից (նոր բացված) դուրս գտնված տա-  
րածությունը անապատային և, առանց վորեև կուրուրա-  
կան հետքի: Արևմտյան ուղղությամբ այդ տարածությունը  
Զվարթնոցի պատվարի և քաղաքի նեկրոպոլի միջև կազ-  
մում և մոտ 800 մետր (չի բացասվում, անշուշտ, նաև այդ  
տարածության մեջ պատահական դամբարանները գոյու-  
թյունը), իսկ վաղարշապատ քաղաքի հանդեպ—մոտ 2-3  
կիլոմետր հեռավորություն: Այս դրությունն ըստ ամենայնի  
հաջող բնորոշվում և այն կոչումով, վոր հնուց սկսած կրում  
և Զվարթնոցը—«Առապարի Ս. Գրիգոր», իսկ տեղը—«Առա-  
պար վայր» (Սերեոս), «ավաղախիբ առապար Գաշտավայր»  
(Հովհ. Դրասխանակերտցի):

Այսպիսով պարզվում և, վոր Զվարթնոցի շինարարությունը  
կասարված և առապար-անապատ վայրում, անկախ և վաղա-  
քապատ ֆաղափից յեվ անմիջականորեն կապ չունի նրա հետ:

Այս դրությունը չի փոխվում նրանից, թե այդ տեղում

շինարարությունը մեկ թե մի քանի նվազ և տեղի ունեցելը՝ Հիմնական շինարարությունը պատկանում է Ներսես Շինողին և նրա ժամանակին (VII դ.). նրանից ավելի հինը — հատկապես V—VI դ. դ. հատկանիշներով — մատնանշել կարելի չէ պահպանված մնացորդներից բաղկավորված և միջբարձր տարանք: Մյուս բոլոր շինքերը — Զվարթնոց տաճարը, և շուրջը գտնված բոլոր աշխարհիկ շինքերը, նրանց թվում և բաղանիքը (այն, վոր խաչիկ վարդապետի կողմից ցուցադրվում էր իբրև «կրակապաշտների տաճար») և հնձանները — Ներսեսի կառուցումներն են, վորովհետև բոլորն իրար հետ կապակցված են կոնստրուկտիվ կերպով և միասնությամբ են:

Նույն այդ շինարարությանն են վերաբերում, ինչպես տեսանք վերևում (եջ 22) նաև շուրջանակի յեղած (նորարաց) արտաքին պարխալ — պատվարը և հետևապես այն բաղամասերով շինված քաները նրա ներսում, վորոնց մնացորդները դեռ յերևում են նրա բոլոր մասերում:

Այսպիսով տեսնում ենք, վոր Զվարթնոցը պե՛տք է դիտվի վոր թե իբրև մի յեկեղեցի կամ վանք, թեկուզ և կաթողիկոսանիստ, իր սահմանափակ բնակչությամբ, միայն նրա հետ կապված և նրա կարիքներին ծառայող՝ այլ իր թե տարածությամբ — բավականաչափ ընդարձակ (մեկ կիլոմետր արամագծով) և թե շինությունների քանակով — նա մի բնակատեղի չէ, վորն ունի անշուշտ նայել իր ազատ բնակչությունը, և, վորը լինելով շուրջանակի պարսպված՝ փայտափայ և, մի փոքրիկ քաղաք, մոտավորապես կոլորաձև, այդինքն ընդ — քաղաքի» տիպը: Սա իր միանգամայն մտածված ու կանոնավոր — սիմետրիկ ձևավորմամբ, ինչպես նաև կազմակերպված լայն տնտեսությամբ (առուներ, այգիներ, հնձաններ) կրում է մի անգամից կառուցված լինելու դրոշմը:

Այս յեղրակացությունը, վոր արվում է կատարված ստուգողական պեղումների ու նրա հետ կապված հետազոտական նախնական աշխատանքների արդյունքի հիման վրա՝ միանգամայն համաձայն է և հաստատվում է մասնագրա-

կան այն տեղեկություններով, վոր ունենք մենք հատկապես այդ շինարարության վերաբերյալ:

Ահա թե ինչպես է նկարագրում այդ, ժամանակակից պատմիչը — Սերետը՝

«Յայնմ ժամանակի արկ ի միտս իւր կաթողիկոսն Հայոց Ներսէս շինել իւր բնակութիւն մերձ առ սուրբ եկեղեցեացն՝ որ ի Վաղարշապատ քաղաքին ի վերայ ճանապարհին՝ յորում ասին ընդառաջ եղև թագաւորն Տրդատ՝ սրբոյն Գրիգորի: Շինեաց անդ և եկեղեցի մի յանուն երկնաւոր Զուարթնոցն... և շինեաց եկեղեցին բարձր շինուածովք և չքնաղ զարմանալեաւք...: Ած ջուր եւ երեք զգետնն եւ արկ ի գործ զամենայն վայրն առապար, սնկեաց այգիս եւ ծառատունկս, եւ շուրջանակի պատուարեաց զբնակութեամբ գեղեցկաղիւր յարիմուածով բարձր պարսպաւ ի փառս աստուծոյ» (Սերետ, Պատմություն, Գլ. 17.):

«... Փռթայր (Ներսես) կատարել զշինուած եկեղեցոյն՝ զոր շինեաց ի վերայ պողոտային Վաղարշապոս քաղաքի» (Սերետ, Գլ. 17.):

Մյուս կարևոր աղբյուրը, Հովհաննես Դրասխանակերտցին, ել ավելի վորոշակի պատկեր է տալիս Ներսեսի շինարարության —

«Հայրապետն Ներսէս... զարտաքոյս հրաշակերտ եկեղեցոյն, զոր իւր իսկ էր շինեալ՝ շուրջանակի պատուար պարսպով փակեալ ամրացուցանէր, յորինեալ ի նմա յարկըս բնակութեան ինքեան հաստահեղոյս կոփածոյ քաղաքի: Այլ եւ կարգեալ կացուցանէր ի նմա ամբոխուրիւն երդումարդաց բոս պայմանի փայտափայտաց. և ամեալ շուր ի Քասաղ գետոյ՝ զամենայն աւաղախիւր առապար դաշտավայրն ի գործ արկանէք, անկէր այս առապար դաշտանս ծաղկոցաց» (Հովհ. Կթ. Դրասխ. Պատմ. Հայոց, եջ 88, թիֆլ., 1912):

Մասնագրի խոսքերը —

«Կարգեալ կացուցանէր ամբոխութիւնս (մեծ բաղամությամբ) երդումարդաց (տուն, ծուխ, ընտանիք) ըստ պայմանի քաղաքականաց» — պետք է հասկանալ

այն իմաստով, վոր խմբված եր այդտեղ մեծ բնակչու-  
թյուն, վորոնց կյանքը սահմանված, կարգավորված եր  
այնպես, ինչպես քաղաքներում, քաղաքացիների նմանու-  
թյամբ: \*)

Տալով Հին Վաղարշապատի պեղումները...ամփոփումը,  
մենք տեսնում ենք, վոր այդ պեղումները, իբրև նախնա-  
կան փորձ, կատարված ստուգողական—հետախուզական  
ձևով՝ տվին մի արդյունք, վորը ներկայացնում է սպառիչ  
լուծումն առաջադրած խնդրի: պարզվեց նախկին «Հնագի-  
տական շրջանի» հնագիտական բովանդակությունը, ևս առա-  
վել, վերջնականապես լուծվեց պատմական Վաղարշապատի  
տեղի հարցը, վոր առեղծվածի բնույթ եր ստացել, և ի հայտ  
բերվեց յերեք տարբեր եպոխաների ու կուլտուրաների ներ-  
կայությունն ու նրանց ուրույն կենտրոնները հիշյալ հնա-  
գիտական շրջանի հողամասում: Սա ունի գիտական խոշոր  
արժեք ու նշանակություն նրանով, վոր արդեն ֆիկսացրալի  
յենթարկված այդ կենտրոնները անսպառ նյութ են մեր  
ձեռքում իբրև հիմք ու հաստատուն բազա մեր հետագա  
աշխատանքների համար այդ վայրում:

Այսուհետև վորոշակի յեն ուղեգծվում մեր անելիքները,  
այն է՝ խորացնել աշխատանքն յուրաքանչյուրի մեջ առան-  
ձին, մանրագնին կերպով ուսումնասիրել այդ կուլտուրա-  
կան կոմպլեքսները և նրանց փոխանակումը մեկը մյուսին՝  
վորպեսզի իմանենա՞ կերպով վերականգնել կարողանանք  
տեղի հասարակական-տնտեսական կյանքի զարգացման գի-  
նամիկան, վորը իսկ համապատասխան լինի պատմական  
իրականության:

Իացի այս գիտական հետաքրքրությունից, արդեն կա-  
տարված ու կատարելիք աշխատանքները վոչ պակաս  
կարևորություն են ներկայացնում նաև գործնական տեսա-  
կետից մեզ համար այժմ, մի այնպիսի ժամանակ, յերբ


\*) Իրավացի յե միանգամայն պրոֆ. Մանանդյանը, վորը մատենագրի  
այս խոսքերից յեզրակացնում է քաղաքացիների ունեցած արտոնություն-  
ների և առանձին իրավունքների գոյության մասին ընդհանրապես («О  
торговле и городах Армении», 163—4):

պատմությունը մի նոր ու բացառիկ իր բովանդակությամբ  
դարագլուխ է սկսել, յերբ պրոլետարիատն ամբողջ թափով  
սոցիալիզմի կառուցման ու հաղթանակների իր արշավն է  
կատարում՝ այս աննախընթաց իր չափերով ու բովանդա-  
կությամբ շինարարության միջոցին՝ ավելորդ չե և վոչ մի  
փորձը մարդկության անցած կյանքի, և այդ փորձը հայտ-  
նարեցող նյութական կուլտուրայի յուրաքանչյուր բեկորը  
աղբյուր և պատճառ կարող է հանդիսանալ նորանոր ստեղ-  
ծագործությունների սոց. շինարարության մեջ:

Ուստի և մեր ձեռնարկած գեռ ևս փոքրածավալ այս  
պեղումները շարունակելն ու ավելի մեծ չափերի հասցնելը,  
թվում է թե, պետք է համարվի աներկբայելի անհրաժեշ-  
տություն:

1932. XI.

Յերևան.



Տարբ. II Табл.

Հվարթնոցի—Վաղարշապատի ձեռնարկական շրջանը  
 Общий план „Археологического района“ Звартноца, предполагаемого городища древнего Вагаршапата.

## РЕЗЮМЕ

### РАСКОПКИ ДРЕВНЕГО ВАГАРШАПАТА.

Раскопки древнего Вагаршапата были произведены в 1931 г. с 12 октября по 10 ноября, с результатом большого научного значения.

После прекращения *Анийских* раскопок (1918 г.), проводившихся академиком Н. Я. Марром в продолжение свыше 15 лет, идея систематических раскопок в Армении впервые была затронута Комитетом Охраны Древностей ССРА. Эта идея нашла свое отражение в первом пятилетнем плане и оформилась лишь в 1930 г. на заседании Комитета от 30 августа под председательством Наркома по просвещению ССРА А. М. Егизаряна и с участием гостившего тогда в Армении академика Н. Я. Марра.

Местом для систематических раскопок было намечено „городище“ древнего Вагаршапата. Н. Я. Марр придавая исключительное значение систематическим раскопкам в Армении, принял на себя их научное руководство.

Комитетом Охраны Древностей Армении было немедленно приступлено к подготовительным работам, однако раскопки могли осуществиться лишь осенью 1931 года. Коллегией НКП была создана под главенством Н. Я. Марра специальная „Комиссия по раскопкам древнего Вагаршапата“. Состав комиссии: акад. Н. Я. Марр, председ. комитета акад. А. И. Таманян, проф. И. И. Мещанинов, проф. А. А. Калантар, Т. А. Тораманян, Г. К. Асатур, Сен. Тер-Акопян и С. В. Тер-Аве-



тисян. К участию в работе комиссии были привлечены также молодые научные работники.

Под „городищем древнего Вагаршапата“ понималась значительная территория, расположенная на восток от существующего ныне Вагаршапата, обнимающая также район Звартноца. Территория эта покрыта множеством невысоких холмов, как-бы кольцом охватывающих ее. Холмы эти давали основание старым исследователям видеть в них „остатки большого города“, „городских стен, башен и пр. сооружений“, подразумевая в них городище исторического Вагаршапата, столицы Арменни в римскую эпоху, *Καλιπόλις*-а (см. табл. I и II—Карта местности и Общий план „Археологического района“).

Раскопки в намеченной территории начались 12 октября 1931 года, однако без непосредственного руководства Николая Яковлевича, задержавшегося другими работами, не давшими ему возможности приехать в Армению. Вследствие этого раскопкам был придан *разведочный характер*, с конкретным заданием—*выяснить археологическое содержание* всей территории выделенной в качестве „археологического района“.

Основываясь на видимых наружных признаках, вся территория была разбита на несколько отдельных участков распределенных между отдельными группами для одновременного обследования под руководством тех членов „Комиссии по раскопкам древн. Вагаршапата“, которые имели возможность лично принять участие:

1. Участок Звартноца—под руководством Т. Торамяна.

2. Участок крупного холма „Анаснаг“ („скотный могильник“\*) в северо-западной части „Археологического района“ в сторону Рипсимии-Вагаршапата—под руководством С. Тер-Акопяна.

\*) Название холма относится к позднему времени, 1900-м годам, когда на этом месте был похоронен чумной скот.

3. Участок крупных холмов на юго-восток от Звартноца—под руководством С. В. Тер-Аветисяна.

4. Общее обследование всей территории „Археологического района“—под руководством А. А. Калантара (см. Табл. II).

Параллельно с раскопками была произведена геодезическая с'емка района (Табл. III, стр. 74—75) с разбивкой территории на квадраты (100×100 метр.) и обозначением специальными пронумерованными каменными знаками.

В результате произведенных работ по обследованию всей территории, выяснилось, что те предположения, которые имели место в начале при разбивке „археологического района“ на отдельные участки—совершенно не соответствуют археологическому содержанию района, а именно, стало очевидным, что *на этой территории нет древнего Вагаршапата*, и вообще нет никакого другого „крупного города“. Холмообразные возвышенности—природные (за исключением 5—6-и) и не имеют следов искусственного происхождения, а местность по своим почвенным слоям является девственной пустыней, за исключением лишь некоторых участков, которые разновременно были использованы человеком.

*Участки, содержащие в себе культурные остатки, расположены в различных частях „Археологического района“, принадлежат к различным историческим эпохам и совершенно отличаются друг от друга своей культурой.*

Они представляют из себя *три центра* различного культурного строительства, показанные на Табл. III—Геодезической с'емке. Из этих центров первый и второй (на С'емке I и II) совершенно не связаны с историческим Вагаршапатам и не имеют к нему никакого отношения. Третий же (на С'емке III), смежный с существующим Вагаршапатам, представляет из себя *некрополь* древнего Вагаршапата.

I. Из трех ясно выраженных культурных комплексов по времени наиболее поздней является эпоха *строительства Звартноца* (VII в.). Она не имеет ничего общего с Вагаршапатом римской эпохи. Здесь существенной новостью оказалось то, что на расстоянии  $1\frac{1}{2}$  километра от Звартноца открыты нижние части массивной стены (сн. 4) окружающей (местами граненной) земли вокруг Звартноца, в диаметре около одного км., имея в центре Звартноц (Табл. III). Это, окруженное большой стеной, пространство обнимает в себе множество следов построек, садов, каналов и пр., указывающих на то, что там было *поселение городского типа*, характера города—сада, основанное одновременно с Звартноцем (VII в.), вероятно самим Нерсесом Строителем, во всяком случае в его время, в пустынном месте, на расстоянии около 3-х км. на восток от Вагаршапата (см. Табл. II и III—I).

Этот вывод совершенно подтверждается данными древне-армянских историков (Себеос, Иоан Драсханакертци) современных строительству Звартноца. И именно теперь, после раскопок, нам становятся более понятными упомянутые выше исторические книжные материалы.

II. На юго-запад от Звартноца находится следующий центр, по времени наиболее древний, представленный рядом *курганов—погребений* (см. Табл. III—II). Раскопки одного из 6-ти фиксированных курганов (2-го) дали нам ценные открытия впервые наблюдающиеся в Армении. Эта эпоха строительства курганов как по приемам строительства, технике, по содержимым предметам и ритуалу связанному с погребением (сожжение), так и по своему социальному содержанию—относится к дохалдскому времени истории Армении (нач. первого тысячелетия до н. э.) с родовым обществом; при чем

эти курганные погребения могут быть приписываемы именно родоначальникам, предводителям родов.

Данная эпоха истории Армении устанавливается наукой впервые, и поэтому вновь открытые материалы приобретают по своему научному значению еще больший интерес. (См. Табл. IV—VI, сн. 5—11).

В числе предметов раскопанных в данном кургане были найдены остатки окаменелых культурных (хлебных) злаков, определенные и исследованные С. Г. Тамашьян (см. Приложение II, стр. 85—94, „Ископаемая пшеница из раскопок кургана“).

III. Третий из культурных комплексов определяемый раскопками—есть *некрополь* города римской эпохи, который находится на СЗ от первых двух, занимает СЗ-конец „Археологического района“ и расположен с восточной стороны современного нам Вагаршапата (см. Табл. II. Общий план Археологич. района и Табл. III—III Геодезич. съемка).

Открытые здесь погребения (5 различных типов со множеством разновидностей. См. сн. 12—16, Табл. VII—VIII) по своему типу и содержанию принадлежат римской эпохе (точнее от I до V в.в., хотя по некоторым признакам существование тут поселения б. м. предшествовало римской эпохе). Они богаты по содержанию и имеют большое научное значение, т. к. знакомят нас с техникой эпохи, производством, бытом, культурными взаимоотношениями между Востоком и Западом—армянами, римлянами, парфянами, сасанидами, ясно подчеркивая интернациональный характер городского населения.

Греческая надгробная надпись найденная в данном некрополе 1914—15 г., прочитанная академиком С. А. Жебелевым впервые печатается в этом издании (см. Приложение I, [стр. 75—83).

Некрополь города своим местоположением, и вообще обследование всей преднамеченной территории, окончательно выяснили, что считать „Археологический район“ местом древнего Вагаршапата—недоразумение, и что древний Вагаршапат находился на том же самом месте, где находится ныне существующий Вагаршапат. Выясняется приблизительно даже главные пункты топографии древн. города. В этом вопросе сходятся данные материальной культуры, греко-латинских надписей, найденных разновременно в Вагаршапате, и упоминания древне-армянских историков.

В заключение необходимо отметить огромное научное значение результатов произведенных раскопок, которые проливают новый обильный свет на различные эпохи истории Армении, точно отмечая в обследованной территории определенные центры соответствующих культур как неисчерпаемых источников и направляют дальнейшую нашу исследовательскую работу в этом районе. Поэтому необходимость продолжения и развития начатых в 1931 г. в скромном масштабе раскопок—настоятельно диктуется интересами изучения истории Армении.

ՀԻՆ ՎԱԳԱՐՇԱՊԱՏԻ ՊԵՂՈՄՆԵՐԸ  
РАСКОПКИ ДРЕВН. ВАГАРШАПАТА

Հ ա ղ Ե Ղ յ ծ  
Приложение I

Աղաղակի Ա. Ա. ԺԵԲԵԼԵՎ,

ՀՈՒՆԱՐԵՆ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՏԵՎԱԾ ՎԱԳԱՐՇԱՊԱՏՈՒՄ

Академик С. А. ЖЕБЕЛЕВ

ГРЕЧЕСКАЯ НАДГРОБНАЯ НАДПИСЬ  
ИЗ ВАГАРШАПАТА

ՀՈՒՆՍՈՒՐԵՆ ԳՍՄԲԱՆԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ԳՏՆՎԱՆԾ ՎԱՂԱՐՇԱՊԱՏՈՒՄ

Արձանագրությունը գրված է սալանման քարի վրա, կարմրավուն տուֆից, քառանկյունի լայն շրջանակի մեջ, վորի աջ կողմում փորված է սովորական նշան—տամդայի ձևով (թռչնի կոնտուրային նկար): Գտնվել է պատահաբար, 1914—15 թվերին, Եջմիածնի ջրանցքի շինության միջոցին, Վաղարշապատից մեկ կիլոմետրի վրա դեպի արևելք, Հռիփսիմեյի և Զվարթնոցի ուղիդ միջև, ջրանցքի յերկրորդ կամուրջի մոտ (Գեոզեզ. հանույթ, քառ. 112): Արձանագրությունը պահվում էր Եջմիածնի Հնագիտական թանգարանում, ներկայումս նա գտնվում է Կուլտուր-Պատմական թանգարանում Յերևանում:

Քարի բարձրությունը շրջանակով—0,72 մետր, առանց շրջանակի—0,50 մ., լայնությունը շրջանակով—0,44 մ., առանց շրջանակի—0,34, հաստությունը—0,12 մ.: Շրջանակի միջի տարածությունը, վոր ամբողջովին բռնված է արձանագրությամբ, փորված խորացրած է  $2\frac{1}{2}$  ս.մ.~ով. գրերի բարձրությունը տատանվում է  $2\frac{1}{2}$ — $3\frac{1}{2}$  ս. մ., վերին շրջանակի տողի և վերջին տողի գրերը—4 սմ.:

Արձանագրությունը հրատարակվում է եստամպաժի և լուսանկարի հիման վրա, վոր սիրալիրաբար տրամադրել է ինձ Ա. Ա. Քալանթարը:

Շրջանակի վերին մասի վրա ավելի խոշոր տառերով փո-

ըագրված է՝ Μνήμη Χάριν. այնուհետև գալիս է բուն դամբանականը. —

1. Αἰλ(ίαν) Μαζίμη<ν> σύμβιον

ζήσασαν ἔτη λέ

καὶ Αἰλ(ίαν) Οὐάλεντίαν

θυγατέ[ρ]α [ζ]ήσασαν

5. ἔτη γ' Αἰλ(ίως) Οὐάλη:Ζι—

λιάρχη: λει(εῶνος) εἰ Απολ [λίνα]=

ρίας αὐτῶν ἀνήρ και

8. πατήρ ἀνέθιχεν

[ ] անկյունավոր փակագծերի մեջ գրված են այն գրերը, վորոնք բնագրում չեն պահպանվել. < > այն գրերը, վորոնք փորագրողի անփութությամբ բաց են թողնված. ( ) կրճատումները, վորոնք պատահում են արձանագրության մեջ. գրերի տակ յեղած կետերը մատնացույց են են անում, վոր այդ գրերը բնագրում պահպանվել են յեղծված գրությամբ:

Արձանագրությունը փորագրված է ճշտությամբ, բացի 7-րդ տողից, վորտեղ գրիչը փորագրել է ριάς-ի փոխարեն ραις, և αὐτῶν-ի փոխարեն αὐτες.

Ըստ գրության բնույթի՝ արձանագրությունը պատկանում է II դարի յերկրորդ կիսին, կամ III դարի առաջին կիսին մեր թվ.:

Արձանագրության գլխավոր հետաքրքրությունը կայանում է նրանում, վոր վաղարշապատի հենց իրեն մեջ, կամ նրան մոտ, գտնվում էր XV Ապոլլոնյան լեգիոնի զորամասի (vexillatio) բանակատեղին: Այդ մասին գիտեցինք և առաջ՝ վաղարշապատում գտնված արձանագրություններից — 175 թվ. (Dessau, Inscriptiones Latinae selectae 9117) և 185 թվ. (Corpus inscriptionum latinarum III 6052). Այդ յերկու արձանագրությունների վերաբերյալ մանրամասն բացա-


տրություններ տվել է Մ. Ի. Ռոստովցևը Изв. Αρχеол. Комиссии, вып. 33 (1909) էջ—1 շրնկ.:

Հրատարակվող այս արձանագրությունից իմանում ենք, վոր զինվորական տրիբուն (Χιλιάρχης) Ելլի վալենտը վաղարշապատում գտնված ժամանակ կորցնում է իր կնոջը և աղջկան, թաղում է նրանց այնտեղ, արձան է կանգնում նրանց հիշատակին և գրում սույն դամբանականը: Արձանագրության մեջ հիշված յերեք անուններն էլ հռոմեական են:

Թարգմանությունը.

Ի հիշատակ

Ելլի Մաքսիմի—ամուսնու, վոր ապրեց 35 տարի, և Ելլի վալենտինի—աղջկա, վոր ապրեց 13 տարի՝ Ելլի վալենտ, XV Ապոլլոնյան լեգիոնի զինվորական տրիբուն, նրանց ամուսինը և հայրը — նվիրեց (աստվածներին):



Հոնիկի գործարարների արձանագրության թվով 112 համարի Վաղարշապատի մեջ գրեցական անդրոգրային անգիրը  
 Греческая надгробная надпись из Вагаршапата.

### ГРЕЧЕСКАЯ НАДГРОБНАЯ НАДПИСЬ ИЗ ВАГАРШАПАТА

Вырезанная на плите из местного красноватого туфа, окоймленная рамкою, на левой стороне которой изображен обычный знак в виде тамги, греческая надпись найдена случайно в 1914—15 г. во время прорытия Эчмиадзинского оросительного канала, на расстоянии одного километра от Вагаршапата на восток, между Рипсимии и Звартноцем (у второго моста на канале, по Геодезичес'емке на квадр. 112). Надпись хранилась в Эчмиадзинском Археологическом Музее, ныне находится в Культурно-Историческом Музее ССР Армении в Эривани.

Высота плиты с рамкою—0,72 м. без рамки 0,50 м., ширина с рамкою—0,44 м., без рамки—0,34 м., толщина плиты—0,12 м.. Площадь надписи в углублении  $2\frac{1}{2}$  см. Высота букв колеблется от  $2\frac{1}{2}$  до  $3\frac{1}{2}$  см., верхняя и последняя строки—4 см.

Издается надпись по эстампажу и фотографическому снимку, исполненному и любезно мне представленному А. А. Калантаром.

На верхней части рамки более крупными буквами вырезано: Μνήμη Χάριν. Далее следует самое надгробие.

1. Αἰ(ιαν) Μαξιμη<ν> σύμβιον

ζήσασαν ἔτη λέ

καὶ Αἰ(ιαν) Οὐαλεντίναν

θυγατέ[ρ]α [ζ]ήσασαν

ἔτη γ' Αἰ(ιαν) Οὐαληζή-

λίαρχηρ λεγ(εῶνος) εἰ Απολ [λινα]=

ρίας αὐτῶν ἀντηρ καὶ

8. πατήρ ἀνέδηκεν

[ ] обозначены пропавшие на оригинале буквы; < > буквы, по небрежности опущенные резчиком; ( )—сокращения, допущенные в надписи; точки под буквами указывают на то, что эти буквы на оригинале в поврежденном состоянии.

Надпись вырезана исправно, за исключением строки 7-ой, где резчик вместо ρίας вырезал ραις и вместо должествующего стоять αὐτῶν вырезал αὐτες.

По характеру письма надпись относится ко второй половине II,—первой половине III в. н. э.

Главный интерес надписи состоит в том, что на месте или по близости от Вагаршапата расположена была стоянка отряда (vexillatio) XV Аполлонова легиона. Об этом известно было, впрочем, и раньше из надписей, происходящих из Вагаршапата: 175 г. (Dessau, inscriptions latinae selectae 9117) и 185 г. (Corpus inscriptionum latinae III 6052). Подробные объяснения к этим двум надписям даны М. И. Ростовцевым в Изв. Арх. Комм. вып. 33 (1909), стр. 1 сл.

Издаваемая ныне надпись показывает, что военный трибун (Χιλιάρχηρ) Элий Валент, за время своего пребы-

вания, в Вагаршапате, потерял там жену и дочь, похоронил их там и поставил в память их надгробную плиту. Три имени, названные в надписи,—римские.

Перевод:

Памяти оади

Элию Максиму супругу, жившую 35 лет,  
и Элию Валентину дочь, жившую 13 лет,  
Элий Валент, военный трибун 15 Аполлонова  
легиона, их муж и отец посвятил (богам).

ՀԻՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ  
РАСКОПКИ ДРЕВН. ВАГАРШАПАТА

Հ ա Վ Ե Ղ Վ ա ծ  
Приложение II

Ս. ԹԱՄԱՄՇՅԱՆ

«ԲՐԱԾՈՒ» ՅՈՐԵՆ ԿՈՒՐԳԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ  
ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆՈՒՄ

С. Г. ТАМАМШЯН

„ИСКОПАЕМАЯ“ ПШЕНИЦА ИЗ РАСКОПОК  
КУРГАНА БЛИЗ ВАГАРШАПАТА



«ԲՐԱՆՈՆ» ՅՈՐԵՆ ԽՈՐՀՐԳ. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԲՈՒՍԱԿԱՆ ՄՆԱՅՈՐԳՆԵՐ ԿՈՒՐԳԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ  
(ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋ.)

Ուսումնասիրութեան համար մեզ հանձնված նյութը, վոր հանված է Վաղարշապատի շրջանի մի Կուրգան-դամբարանից, ասբեստանման կակուղ փոշի ե ասեղնաթերթիկներով, միախառնված ավազի հետ: Բազմիցս լվանալուց հետո ջրով և թողնելով, վոր նստի տակը՝ հաջողվեց այդ մասսայից առանձնացնել ավազը: Մանրադիտակային հետազոտութեանը պարզեց, վոր այդ ավազը դիատոմիտ է, վորը լայն տարածումն ունի Փարաքար-Վաղարշապատի, ինչպես նաև Խորհրդ. Հայաստանի քանի մի այլ շրջաններում: Դիատոմիտի գլխավոր մասսան այստեղ ներկայացված է *Pinnularia* ցեղի տեսակներով (նկ. 1): Ավազից առանձնացրած ասեղնաթերթիկները մասամբ դրինք մոխրաջրի (KOH) մեջ, մասամբ ել աղաթթվուտի մեջ. սակայն վոչ մեկ և վոչ մյուս դեպքում նրանք փոփոխութեան չենթարկվեցին:

Մանրադիտական աշխատանքը ցույց տվեց, վոր այդ ամբողջ «ասբեստանման» փոշին կազմված է բուսական մնացորդներից, գլխավորապես նրանց բճճային կմախքներից, ներծծված, ըստ յերևույթին, կայծքարահողով: Թերթիկները և ասեղիկները ներկայացնում են մեծ մասամբ խոտաբույսի մնացորդներ: Համեմատելով մեր ժամանակակից խոտաբույսերի անատոմիական ստրուկտուրայի հետ՝ հաջողվեց պարզել, վոր ներկա դեպքում ունենք *Triticum* ցեղի ներկայացուցիչ, ամենից ավելի մոտեցող *Triticum dicocum* Schrank - եմմերի ցորենին:

Հայտարարված են հետևյալ բուսական մասերը.

1. Մեծ քանակությամբ մազիկներ (քիստեր) (նկ. 2), վորոնք սովորաբար տեղավորված են լինում *Tr. dieccocum* Schr. հատիկի վերին մասում:

2. Հարդի վերնամաշկի կտորներ (նկ. 3), վորի յերկար հաստացած կողերով բճիճների արանքներում տեղ-տեղ ընկած են կարճ բոլորածված բճիճներ: Յերբեմն նրանց մեջ պատահում են նաև հերձվածքներ:

3. Բճճաթաղանդի կտորներ, այսպես կոչված «հիպոդերմեր» — հարդի ներքնամաշկը (նկ. 4):

4. Բավականաչափ գտնված են նաև ձողոտի վերնամաշկի կտորտանքներ (նկ. 5). նա հեշտությամբ ճանաչվում է յերկարացած բնորոշ հերձվածքներով, վորոնք զուգահեռաբար դասավորված են ալիքավոր թաղանդով պատած յերկար բճիճների արանքում մանր բճիճների հետ միախառնված:

5. Հատիկի խոտորնակի բճիճների շերտի մնացորդներ (նկ. 6):

6. Հատիկի ալեյրոնյան հյուսվածքի կտորներ (նկ. 7). միմիայն բճճային թաղանդներ:

7. Պայծառ գույնի փայլուն հատիկներ, ըստ յերևույթին, ոսլայի հատիկների ձևափոխված կմախքներ (ամիլա-պեկտինյան ?) (նկ. 8). վորոնք յողի հետ տալիս են բաց կապուտ-դեղին գունավորում:

8. Բացի դրանից, այս խոտարույսերի մնացորդների մեջ պատահում են շուշանացեղ բույսի, ըստ յերևույթին, սոխի վերնամաշկի (եպիդերմիսի) կտորներ (նկ. 9):

Պեղումներից հանված բուսական այս մնացորդները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, վորովհետև լույս են սփռում կուլտուրական բույսերի պատմության վրա:

Նախկին գյուտերից «Բրածո» ցորենը, բայց արդեն կերակրի մնացորդների ձևով, հայտնի են հին քարե դարից: Պրոֆեսոր Grüss-ի (Բերլին)\* ուսումնասիրություններով ապացուցված է, վոր կավե ամանի կտորների վրա գտնվել


են եմմերի ցորենի մնացորդներ՝ պատրաստված, անշուշտ, իբրև կերակուր — կաշայի նման:

Ներկա դեպքում թե հատիկի և թե հարդի մնացորդների առկայությունը հնարավորություն է տալիս յենթադրելու, վոր այստեղ կան վոչ միայն հատիկներ, այլ և ցորուններ, գուցե նույն իսկ ցորենի ամբողջ խուրձեր:

Պեղումներով հայտնարբերված այս բուսական մնացորդները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, նրանով, վոր կարողանում են վորոշ լույս սփռել կուլտուրական բույսերի պատմության վրա:


Ահա մեկը այն փայլուն որինականերից, յերբ հնագիտությունը ոգնություն է հասնում բուսաբանության պատմության:

1933. Յերևան:



Բ. Կուլանից հանված աղբետանման նյութը.  
Асбестообразная масса из раскопок кургана-погребения. (См. стр. 33)


\*) Johannes Grüss. Ermittlungen von Speiseresten auf Topf-scherben aus der ältesten Steinzeit. Forsch. und Forschr. 1932.



S.T.del.


1

Նկ. 1 րիս.




S.T.del

Նկ. 2 րիս.



S.T.del.


Նկ. 3 րիս.



S.T.del.

4


Նկ. 4 րիս.



S.T.del

5


Նկար 5 րիս.



S.T.del.

6


Նկար 6 րիս.



S.T.del

7

Նկար 7 րիս.



S.T.del.

8

Նկար 8 րիս.

„Ископаемая“ пшеница из ССР Армении  
(Растительные остатки из раскопок кургана  
Вагаршапатского района)

Материал доставленный для изучения из кургана Вагаршапатского района представляет собой мягкий асбестообразный порошок с игольчатыми пластинками, смешанными с песком. Путем многократного промывания водой и отмучиванием удалось песок отделить от этой асбестообразной массы.

При микроскопическом исследовании песок оказался диатомитом, который как раз в этом районе (Паракар-Вагаршапат) недавно обнаружен в небольших количествах (пласты мощностью до 1,5 метра в среднем тянутся на площади в несколько квадратных километров) и которые широко распространены и в других районах Армении. Главная масса диатомита представлена здесь видами из рода *Pinnularia* (рис. 1).

Отделенные от песка игольчатые пластинки были помещены частью в щелочь (KOH), частью в соляную кислоту. Но ни в том, ни в другом случае действию не подверглись.

При микроскопическом исследовании обнаружилось, что весь „асбестообразный“ порошок состоит из растительных остатков — клеточных скелетов, большей частью пропитанных кремнеземом.

Пластинки и иголки представляют собой в большинстве случаев остатки злака. При сравнении с анатомической структурой современных наших злаков, пришлось прийти к заключению, что в данном случае перед нами имеется представитель из рода *Triticum*, ближе всего по форме клеток подходящий к двузернянкам — *Triticum diccosum* Schrank или к так называемым пшеницам Эммера. Обнаружены следующие уцелевшие части растений, части, сохранившиеся настолько хорошо, что об их морфологической сущности можно говорить с достаточной уверенностью:

1. В большом количестве волоски (рис. 2), которые обычно помещаются на верхушке зерновки.

2. Кусочки верхней кожицы мякины (рис. 3), у которой между длинными клетками с утолщенными стенками вкраплены короткие характерные округло-овальные клетки. Иногда встречаются среди них и устьца.

3. Внутренняя кожица мякины, т. назыв. „гиподерма“ (рис. 4), представлена кусочками клеточной оболочки.

4. Немало найдено также обрывков эпидермиса — верхней кожицы соломы. Она легко узнается по своеобразной форме, характерной для злаков, вытянутыми устьицами, расположенными параллельно между продолговатыми клетками с волнистой оболочкой, которые перемешаны с более мелкими клетками (рис. 5).

5. Остатки слоя т. назыв. „поперечных клеток“ из зерновки (рис. 6).

6. Алеироновая ткань из зерновки сохранилась только в виде клеточных оболочек (рис. 7).

7. Кое-где разбросанные (в поле зрения микроскопа) блестящие светлые зерна, очевидно являются амилопектиновыми деформированными скелетами крахмальных зерен. С иодом дают голубоватую-желтую окраску (рис. 8).

8. Кроме того среди этих злаковых остатков встречаются там же кусочки эпидермиса, который по морфо-

логии устьиц, клеток и по их расположению крайне напоминает листья лука (рис. 9).




табл. 9 рис.

Нахождение „ископаемой“ пшеницы, но уже в виде пищевых остатков известны с глубокого каменного века. Исследованиями профессора Грюсса (Берлин) доказано, что на осколках глиняной посуды найдены пшеницы типа Эммера, которая изготовлена была очевидно в виде каши\*).

Наличие в данном случае, как остатков зерновки, так и соломы, дает возможность сделать предположение, что здесь имеются не только зёрна, но также и стебли, а может быть и целые снопы пшеницы. Растительные остатки из раскопок представляют несомненный интерес, т. к. до известной степени проливают свет на историю культурных растений. И вот один из блестящих случаев, когда археология приходит на помощь истории растениеводства!

1933. Эривань.



Johannes Grüss: Ermittlungen von Speiseresten auf Topfscherben aus der ältesten Steinzeit. Forsch. und Forsch. 1932.

Հայաստանի Ազգային գրադարան



NL0427597

Մելիքյան Ֆոնդի հրատարակությունների համար դիմել  
Գիսնրաս սպարան, Յերեվան, Տերյան 68.